

ԵՄ- Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության
համաձայնագիր

«Աջակցություն ՀԸԳԸ մշտադիտարկանր, իրագործմանը և հաղորդակցությանը»

Contract ENI/2023/442-873

ՀԸԳԸ իրականացման մշտադիտարկում

ՔՀԿ-ների կողմից վերանայված (որոշ ոլորտներում)

15 Հունվարի 2024 թ.



Ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Ծրագիրը իրականացվում է GOPA PACE-ի
կողմից

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ/ԴԱՏԱԿԱՆ ՈԼՈՐՏ	4
Իրավունքի գերակայությունը և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների հարգումը.....	4
Դատավորների պատրաստման խնդիրները	6
Գլխավոր դատախազություն	7
ՔՐԵԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ	8
Խոշտանգումներից, վատ և անմարդկային վերաբերմունքից զերծ մնալու իրավունք.....	9
Անազատության մեջ գտնվող անձանց նախապես ազատ արձակելու իրավունք.	10
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԸ	10
ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՍ ՊԱՅՔԱԸ	13
Իրավունքի գերակայությունը և մարդու իրավունքների ու հիմնարար.....	13
Կազմակերպված հանցավորության և կոռուպցիայի դեմ պայքարը.....	14
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (ԿԿՀ)	14
Կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ կատարված բարեփոխումները և ի հայտ եկած խնդիրները	16
Կոռուպցիոն հանցագործությունների քննություն.....	16
ՀԸԳՀ Հանրային գնումների համակարգ	17
Թափանցիկ և հաշվետու կառավարում	18
Հակակոռուպցիոն 2019–2022թթ. ռազմավարություն	18
ՀԱԿԱԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ	23
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ	26
Քաղցկեղի դեմ պայքարին ուղղված միջոցառումների իրականացում	26
Քույրական գործի զարգացմանն ուղղված ծրագրի մշակում և ներդրում.....	27
ԱԱՊ բարեփոխումներ.....	27
Պետական պատվերի ծառայությունների մասով իրագեկում.....	28
Հոգեբուժական ծառայությունների բարեփոխումների շրջանակում ծառայության հզորացմանն ուղղված միջոցառումներ.....	29
Էլեկտրոնային առողջապահական համակարգ.....	29
Հանրային առողջապահություն	31
Պալլիատիվ օգնություն.....	31
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ	32

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴԱՐ Ե ԲԱՐԵՆՊԱՍՏ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔ	37
Առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմին	38
Արդարադատության հասանելիություն	40
Աշխատանքային իրավունքների պաշտպանություն, Աշխատանքային օրենսգրքի փոփոխություններ	40

Այս հրատարակությունը ֆինանսավորվել է Եվրոպական միության կողմից: Դրա բովանդակությունը բացառապես հեղինակների պատասխանատվությունն է և պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները:



ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Հոկտեմբերի 18, 2023թ. քննարկման

ԵՄ-Հայաստան Համընդհանուր և ընդլայնված գործընկերային համաձայնագրի իրականացման մշտադիտարկման շուրջ

(Քաղաքացիական հասարակության կառույցների և փորձագետների գնահատականները Համաձայնագրի մի քանի ոլորտներում բարեփոխումներ իրականացնելու ներկա ընթացքի շուրջ)

Համընդհանուր և ընդլայնված գործընկերային համաձայնագիրը (ՀԸԳՀ) ԵՄ-ի և Հայաստանի միջև գործող կարևորագույն փաստաթուղթն է, որը ստեղծում է հնարավորություն Հայաստանի հանրային կյանքի, արդյունաբերության, պետական համակարգի բոլոր մակարդակներում իրականացնել բարեփոխումներ՝ մոտեցնելով Հայաստանը եվրոպական չափանիշներին, թե օրենսդրական և թե կիրառական մակարդակներում:

ՀԸԳՀ-ի իրականացման նպատակով ՀՀ Կառավարության կողմից մշակվել է ճանապարհային քարտեզ, որի համակարգման և վերահսկման աշխատանքները հանձնարարվել են ՀՀ փոխվարչապետ Մ. Գրիգորյանի գրասենյակին:

Հայաստանի քաղաքացիական հասարակությունը մեծ ուշադրությամբ հետևել է թե համաձայնագրի պատրաստման գործընթացին, թե ստորագրումից և վավերականացումից հետո դրա իրականացմանը: Հավատարիմ մնալով իր առաքելությանը, քաղաքացիական հասարակության կառույցներն իրենց ներդրումն են ունենում համակարգված մշտադիտարկումներ իրականացնելով և դրանց հիման վրա գնահատականներ ու առաջարկություններ ներկայացնելով թե ՀՀ կառավարությանը և թե Եվրոպական միության կառույցներին:

Առաջին, և դեռևս միակ, մշտադիտարկման նախագիծն իրականացվել է 2020-22թթ. մի խումբ հասարակական կազմակերպությունների կողմից և ընդգրկել է ՀԸԳՀ-ի սահմանափակ թվով ոլորտներ՝ ելնելով կազմակերպությունների հետաքրքրությունների և գործունեության ոլորտները: Այս նախագծի արդյունքում հրապարակվեցին 2 զեկույց և ներկայացվեցին լայն հանրությանն ու որոշում ընդունողներին: Զեկույցները կարելի է տեսնել հետևյալ հղումով. <https://www.osf.am/wp-content/uploads/2022/04/>: Այս նախագիծը համակարգել և դրա իրականացմանը աջակցել է Բաց հասարակությունների հիմնադրամ – Հայաստան կառույցը, որն իր գործունեությունը դադարեցրեց 2022թ դեկտեմբերի վերջին: Դրանից հետո, որպես այդպիսին, համակարգված մշտադիտարկում չի իրականացվել:

Եվրոպական միության կողմից աջակցվող «Աջակցություն Հայաստանին ՀԸԳՀ-ի իրականացման, մշտադիտարկման և հաղորդակցման» ծրագրի շրջանակներում, Ծրագրի քաղաքացիական հասարակության կարողությունների զարգացմանը աջակցության թիմը, համագործակցելով ԵՄ պատվիրակության երևանյան գրասենյակի հետ կազմակերպել էր քննարկում, որի ընթացքում 2020-22թ ՀԸԳՀ-ի իրականացման մշտադիտարկող հասարակական կառույցների ներկայացուցիչները տվել

են իրենց գնահատականները ընթացիկ վիճակի մասին՝ հաշվի առնելով նախկին զեկույցում վերհանված խնդիրները և դիտարկումները: Գնահատականներն առնչվում էին հետևյալ ոլորտներին. դատական բարեփոխումներ, քրեական արդարադատություն, ոստիկանության բարեփոխումներ, հավասար հնարավորություններ և հակախտրականություն, հակակոռուպցիոն բարեփոխումներ, առողջապահություն, սոցիալական արդարությունը կրթության ոլորտում, աշխատանքային իրավունքներ:

Սույն փաստաթուղթը կազմել են Եվրոպական միության կողմից աջակցվող «Աջակցություն Հայաստանին ՀԸԳՀ-ի իրականացման, մշտադիտարկման և հաղորդակցման» ծրագրի փորձագետները:

Փաստաթղթում ներկայացված նյութերը տրամադրել են.

1. Արաքս Մելքոնյան, Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ
2. Արթուր Սաքունց, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, ՀԿ
3. Դանիել Իոաննիսյան, Իրազեկ քաղաքացիների միավորում ՀԿ
4. Լարիսա Մինասյան, անկախ փորձագետ
5. Հայկ Աբրահամյան, Հակախտրականության և հավասարության կոալիցիա, ՀԿ
6. Վարուժան Հոկտանյան, Թրանսփերենսի ինթերնեյշնլ հակա-կոռուպցիոն կենտրոն
7. Վիոլետա Զոփունյան, Իրավունքների զարգացման կենտրոն, ՀԿ
8. Տաթևիկ Խաչատրյան, Ժողովրդավարության զարգացման հիմնադրամ

Ստորև ներկայացնում ենք հնչեցված համառոտ գնահատականները՝ ըստ ոլորտների:



ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ/ԴԱՏԱԿԱՆ ՈԼՈՐՏ

ՀՈՂՎԱԾ 12

Իրավունքի գերակայությունը և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների հարգումը.

1. Ազատության, անվտանգության և արդարադատության ոլորտներում իրենց համագործակցության մեջ Կողմերը պետք է հատկապես կարևորեն իրավունքի

գերակայության, այդ թվում՝ դատական համակարգի անկախության ամրապնդումը, արդարադատության մատչելիությունը, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով նախատեսված արդար դատաքննության իրավունքը և քրեական գործերով ու տուժողների իրավունքների դատավարական երաշխիքները:

2. Կողմերը պետք է լիովին համագործակցեն իրավապահ, կոռուպցիայի դեմ պայքարի և արդարադատության իրականացման ոլորտների հաստատությունների արդյունավետ գործունեության հարցում:

3. Մարդու իրավունքները, անխտրականությունը և հիմնարար ազատությունները հարգելը պետք է ուղղորդեն ազատության, անվտանգության և արդարադատության մասով ամբողջ համագործակցությունը:

Դատական ոլորտի բարեփոխումների մասին խոսելիս նշվում է, մի հիմնական ու արմատական խնդիր. առանց սահմանադրական բարեփոխումների բոլոր փոփոխությունները, ըստ էության վտանգված են:

Դատական ոլորտի բարեփոխումների ջատագովությունը կառուցվում է այն խնդիրների վրա, որոնք շատ երկար ժամանակ սկզբունքային լուծումներ չեն գտնում և շարունակում են բացասական հետք թողնել արդարադատություն իրականացնող մարմինների վրա: Դրանք են Բարձրագույն դատական խորհրդի,



դատական իշխանության անկախության և անաչառության, արդար դատաքննության իրավունքի, ոլորտի կրթության խնդիրները: Սրանով է պայմանավորված, որ ընդհանուր առմամբ, վստահությունը դատական համակարգի նկատմամբ ցածր է: Դատական ոլորտի բարեփոխումները պետք է ընթանան հետևյալ մի քանի ուղղություններով և նպատակ ունենան լուծել հետևյալ խնդիրները, ներառյալ թե օրենսդրական և թե իրավակիրառ:

Բարձրագույն դատական խորհրդը նույնպես բարեփոխումների կարիք ունի, հատկապես խնդրահարույց էր կառավարող քաղաքական կուսակցության նախկին անդամ արդարադատության նախարարի ընտրությունը Խորհրդի կազմում, ով դարձավ նաև Խորհրդի նախագահը:

ՀՀ կառավարությունը չիրականացրեց վեթինգ դատական համակարգում, փոխարենը ՀՀ գործադիր իշխանության և արդարադատության նախարարի կողմից դատավորների նկատմամբ կարգապահական վարույթների ինստիտուտը դիտարկվեց որպես դատական իշխանությունում վեթինգի գործիքակազմ և Արդարադատության նախարարի կողմից դատավորների նկատմամբ հարուցվող կարգապահական վարույթների քանակի ավելացման և այդ նպատակով ռեսուրսների ներգրավման մասին հայտարարվեց <https://www.aravot.am/2021/09/30/1219121/>

2022 թվականի ընթացքում Բարձրագույն դատական խորհուրդը քննել է 24 վարույթ, որից 23-ը՝ դատավորների և 1-ը՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամի կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթներ էին: Դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությունների մեծ մասը՝ 18 միջնորդություն, ներկայացրել է արդարադատության նախարարը, 4-ը՝ Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը: Քննության արդյունքում Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունները բավարարվել են 11 վարույթով, որով 3 դատավորի, այդ թվում՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվել են: 2023թ. առաջին կիսամյակում ԲԴԽ կողմից քննվել է 14 վարույթ, որոնցից 12-ով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը ներկայացվել է արդարադատության նախարարի կողմից, և միայն 2-ը Հանձնաժողովի կողմից: 2023թ. առաջին կիսամյակի ընթացքում քննված գործերով 7 դատավորի լիազորություններ դադարեցվել են:

Հարկ է նշել, որ դատավորների կարգապահական պատասխանատվության և կիրառված տույժերի վերաբերյալ պատճառաբանման շուրջ ԲԴԽ-ի կողմից չկա միատեսակ պրակտիկա: Ավելին, դատավորի նկատմամբ կիրառված տույժի տեսակը ԲԴԽ-ի կողմից պատշաճ չի հիմնավորվում, հատկապես, թույլ տրված խախտման և ընտրված կարգապահական տույժի միջև համաչափության սկզբունքի պահպանման համատեքստում: Բարձրագույն դատական խորհրդի առանձին որոշումներում բերված պատճառաբանությունները բավարար չեն եղել: Որոշումներում մեջբերվել են բացառապես օրենսդրական կարգավորումներ, սակայն կոնկրետ դեպքի պարագայում հիմնավորումը պարզ է և անբավարար: Նման մտահոգությունը, հատկապես, արդիական է կարգապահական խախտումները էական որակելու և դատավորի լիազորությունները դադարեցնելու դեպքերում և այն պարագայում, որ Հայաստանի օրենսդրությունը չի նախատեսում Բարձրագույն դատական խորհրդի կողմից ընդունված դատական ակտի բողոքարկման իրավունքի իրականացման արդյունավետ մեխանիզմ:

Դատարանների ծանրաբեռնվածության հարցը շարունակում է մնալ ծայրահեղ: Դատարանները գերծանրաբեռնված են, ինչի պատճառով շատ դատավարություններ հետաձգվում են: Միաժամանակ, պետք է նշել հանրային պաշտպանների ծանրաբեռնվածությունը, որն ազդում է պետության կողմից

տրամադրվող անվճար իրավաբանական օգնության արդյունավետության վրա, ինչն էլ իր հերթին դառնում է խնդիր՝ արդարադատության հասանելիության և մատչելիության իրավունքի իրացման տեսակետից:

Դատավորների ընտրության հետ կապված խնդիրները պահպանվում են. Բարձրագույն դատական խորհրդի կողմից ընտրվում են և առաջխաղացում են ունենում նաև դատավորներ, որոնք Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ստացել են բարեվարքության ստուգման բացասական եզրակացություն: Ավելին, ընտրվում են նաև կառավարող քաղաքական ուժի նախկին անդամներ կամ այդ ուժի հետ սերտորեն աֆիլացված անձինք: Վերադաս ատյաններում կուսակցական պատկանելությամբ դատավորի նշանակման դեպքեր են արձանագրվել, ինչպիսիք են Քաղաքացիական պայմանագիր կուսակցության անդամներից դատավոր նշանակելու փաստերը: Վերաքննիչ դատարանում դատավորների ընտրության և առաջխաղացման գործընթացը փակ է: Մա անհնարին է դարձնում քաղաքացիական հասարակության կառույցների կողմից մշտադիտարկման միջոցով վերահսկողություն իրականացնելու գործընթացը և հասկանալը, թե ինչ հիմքով են այդ մարդիկ նշանակվում բարձրագույն դատական ատյանների դատավորներ: Վճռաբեկ դատարանի դատավորների թեկնածուների ցուցակի կազմման գործընթացը Բարձրագույն դատական խորհրդի կողմից ևս անցնում է առանց հանրային հաշվետվողականության, իսկ Ազգային ժողովի կողմից, թեև դատավորների թեկնածուների ընտրության հարցի քննարկումն իրականացվում է բաց նիստում, պրակտիկայում դատավորների թեկնածուների ընտրությունը կատարվում է բացառապես կառավարող քաղաքական ուժի ձայներով՝ առանց ընդդիմության հնարավոր միջամտության: ԿԿՀ-ի կողմից տրված բարեվարքության վերաբերյալ եզրակացությունները, իհարկե, խորհրդատվական բնույթի են, սակայն նաև հրապարակային չեն, և ԲԴԽ-ն առանց որևէ հիմնավորման դատավորի պաշտոնում ընտրում է նաև բացասական բարեվարքություն ունեցող անձանց:

Դատավորների պատրաստման խնդիրները

2022թ. դեկտեմբերին Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքում կատարված փոփոխություններով ներդրվեց դատավորների թեկնածուների ընտրության հատուկ կարգ, որը ենթադրում է բարդ որակավորման քննություն հանձնելով ընտրվել դատավորի պաշտոնում առանց Արդարադատության ակադեմիայում ուսումնառության: Ակադեմիական մասնագիտական պատրաստման բացառումը ունակ է էականորեն ազդել արդարադատության որակի վրա: Մրա անհրաժեշտությունը հիմնավորվում էր նրանով, որ բարդ որակավորման ստուգման արդյունքում արագ կհամալրվեն դատական համակարգում առկա թափուր հաստիքները: Միաժամանակ, նույն օրենսդրական փոփոխություններով հանվեց նաև հոգեբանական թեստավորման փուլը, ինչը ևս խնդրահարույց է, քանի որ հոգեբանական թեստավորումը էական տարր էր դատավորների թեկնածուների ընտրության համար, քանի որ ուղղված էր ստուգելու թեկնածուի պատասխանատվության զգացումը, լսելու կարողությունը, ինքնատիրապետումը, իշխանության չափավոր օգտագործումը (ազդեցությունը) և այլ ոչ մասնագիտական որակները, որոնք անհրաժեշտ են դատավորի արդյունավետ գործունեության համար:

Առաջարկներ

- *Օրենսդրությամբ սահմանել քաղաքական կուսակցության անդամ կամ ակտիվ քաղաքականությամբ զբաղվող անձանց՝ դատավորների պաշտոնում առնվազն երեք տարով ընտրվելու արգելքը,*
- *Օրենսդրությամբ դատավորների թեկնածուների բարեվարքության գնահատման շրջանակներում ներառել քաղաքական կուսակցության և թեկնածուների ընտանիքների*

անդամների կուսակցության անդամության կամ ակտիվ քաղաքական գործունեություն
իրականացնելու վերաբերյալ,

- Վերականգնել դատավորների թեկնածուների հոգեբանական թեստավորման փուլը և ապահովել նրանց հուզական ինտելեկտի, բարոյական դատողության և արժեքային համակարգի գնահատման արդյունավետ մեթոդաբանություն և ընթացակարգ: Միաժամանակ ապահովել հոգեբանների ներգրավման գործընթացի թափանցիկությունը, թեկնածուներից պահանջվող չափանիշներն ու պահանջները, հոգեբանական թեստերի ու գնահատման արդյունքների հրապարակայնությունը:
- Օրենսդրությամբ ապահովել դատավորների թեկնածուների և առաջխաղացման թեկնածուների ընտրության վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի որոշումների հրապարակայնությունը և պատճառաբանածությունը, հատկապես Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից բարեվարքության գնահատման բացասական և դրական վերապահումով եզրակացություններ ստացած թեկնածուներին ընտրելու և համապատասխան ցուցակներում ընգրկելու դեպքում,
- Օրենսդրությամբ ապահովել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրված բարեվարքության գնահատման վերաբերյալ եզրակացությունների հրապարակայնությունը, թեկուզ եզրափակիչ մասը,
- Ապահովել Բարձրագույն դատական խորհրդի կողմից Վերաքննիչ և Վճռաբեկ դատարաններում առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ընտրության գործընթացի թափանցիկությունը և հանրային հաշվետվողականությունը,
- Գործնականում ապահովել Բարձրագույն դատական խորհրդի կողմից ընդունված որոշումների պատշաճ հիմնավորվածությունը, մասնավորապես՝ հստակ և բավարար հիմնավորումներ ներկայացնել դատավորի արարքի որակման, ինչպես նաև դատավորի նկատմամբ կիրառված տույժի հիմնավորվածության և վերագրվող արարքի համաչափության վերաբերյալ:

Գլխավոր դատախազություն

Մտահոգությունները շարունակում են մնալ Գլխավոր դատախազության անկախության և անաչառության, ինչպես նաև համակարգի ներսում բարեփոխումների բացակայության հետ կապված: Չնայած 2019-2023 թվականների դատաիրավական բարեփոխումների ռազմավարությանը, որը նախատեսում էր բարեփոխումների գործողություններ դատախազության համակարգում, դատաիրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունը պարունակում է միայն մեկ բարեփոխման կետ՝ գործող դատախազների բարեվարքության շարունակական ստուգման վերաբերյալ: Չնայած առկա խնդիրներին և միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ ՏՀԶԿ-ի կողմից տրված առաջարկություններին, դատախազության բարեփոխումները չեն իրականացվում: Մասնավորապես, գլխավոր դատախազին ընտրում է խորհրդարանը՝ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի առաջարկությամբ՝ քաղաքական խմբակցությունների ներկայացրած թեկնածուներից: Գլխավոր դատախազի ընտրության ընթացակարգը արժանիքահեն չէ և ընտրությունը քաղաքականացվելու վտանգներ է պարունակում: Նույն անձը կարող է ընտրվել Գլխավոր դատախազի պաշտոնում երկու ժամկետ անընդմեջ: Ընտրությունների ընթացքում անկախ փորձագիտական գնահատական չի տրվում:

Գլխավոր դատախազին կարող է պաշտոնանկ անել խորհրդարանը, սակայն «Գլխավոր դատախազության մասին» օրենքով նախատեսված հիմքերը անորոշ են: Գլխավոր դատախազության կառուցվածքը գերկենտրոնացված է և ոչ թափանցիկ, առանց ինքնակառավարման մարմնի, օրինակ՝ Դատախազության խորհրդի՝ դատախազության և դատախազների անկախությունն ու թափանցիկությունն ապահովելու համար: Գլխավոր դատախազին կից որակավորման հանձնաժողովի և էթիկայի հանձնաժողովի անդամներն ընտրվում են գլխավոր դատախազի կողմից, այդ թվում՝ հանձնաժողովների ոչ դատախազ անդամները, իսկ հանձնաժողովների գործունեության կարգը սահմանում է գլխավոր դատախազը՝ ազդելով հանձնաժողովի աշխատանքի անկախության վրա: Թեև Որակավորման հանձնաժողովը պատասխանատու է դատախազների թեկնածուների ընտրության և հարցազրույցների համար, սակայն ընտրության, ինչպես նաև թեկնածուի որոշակի պաշտոնում նշանակելու վերաբերյալ վերջնական որոշումը պատկանում է Գլխավոր դատախազին, որը թափանցիկ չէ: Ավելին, դատախազների ընտրության գործընթացը ներառում է նաև փակ մրցույթ, որը հրապարակային չէ և ենթակա չէ դիտարկման: Նմանապես, դատախազների առաջխաղացման հարցը արժանիքների վրա հիմնված և թափանցիկ չէ և հիմնված է գլխավոր դատախազի հայեցողության վրա:

Առաջարկություններ.

- *Կատարել փոփոխություններ Հայաստանի Սահմանադրության մեջ՝ երկու ժամկետ անընդմեջ գլխավոր դատախազի պաշտոնում նույն անձի վերընտրվելու հնարավորությունը սահմանափակելու համար,*
- *Կատարել փոփոխություններ Հայաստանի Սահմանադրության մեջ՝ դատախազների և ոչ դատախազ անդամների ներգրավմամբ դատախազական խորհուրդ ստեղծելու նպատակով,*
- *Խստագույն չափանիշներ սահմանել գլխավոր դատախազի պաշտոնի թեկնածուների համար և հնարավորություն ընձեռել իրավասու թեկնածուներին ինքնաառաջադրվելու,*
- *Վերանայել դատախազության որակավորման և էթիկայի հանձնաժողովների ձևավորման և գործունեության սկզբունքներն ու կարգը:*

ՔՐԵԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Օրենսդրական կարգավորումների տեսանկյունից, քրեական արդարադատության ոլորտի վերջին ժամանակների որպես դրական զարգացում է գնահատվում այն, որ քրեական դատավարության նոր օրենսգրքի համաձայն հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները նախաքննությունն իրականացնում են կոռուպցիոն հանցագործությունների մասով, սակայն, այս մարմնի ղեկավարի ընտրության գործընթացը պետք է էլ ավելի կատարելագործվի:

Դրական զարգացում է գնահատվում նաև նոր Քրեական դատավարության օրենսգրքով (ՔԴՕ) նախատեսվող պարտադիր աուդիտ-տեսագրությունը: Աուդիտվիզուալ ձայնագրությունը պետք է կատարվի քննչական գործողությունը սկսելու պահից՝ առանց ընդհատումների, բացառությամբ չնախատեսված տեխնիկական անսարքության կամ այլ օբյեկտիվ պատճառների առկայության: Աուդիտվիզուալ ձայնագրությունն կոչված է ապահովելու քննչական գործողությունների ամբողջականությունը, տեսանելիությունը, ավելի վստահելի ապացույցներ և խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի դեմ ավելի լավ երաշխիքներ:

Մեկ այլ դրական զարգացում կարելի է համարել տնային կալանքը որպես նոր խափանման միջոց Հայաստանում կիրառվելու հնարավորությունը, չնայած սրան, կամայական և անհիմն կալանքի դեպքերը դեռ շարունակվում են:

Խոշտանգումներից, վատ և անմարդկային վերաբերմունքից զերծ մնալու հրավույն

Քրեական արդարադատության ոլորտի խնդրահարույց իրավիճակը շարունակվում է մնալ խոշտանգումների, վատ և անմարդկային վերաբերմունքից զերծ մնալու բացառիկ իրավունքի իրականացման հետ կապված:

2008թ. գործում էր Հատուկ քննչական ծառայությունը, որը զբաղվում էր խոշտանգումների և կոռուպցիոն հանցագործությունների քննությամբ: Քննչական այս մարմնի լուծարումը նախատեսված էր դատաիրավական բարեփոխումների ռազմավարությամբ 2019-2023թթ. ծրագրով: Այժմ խոշտանգումների գործերը քննում է Հայաստանի Քննչական կոմիտեն: Խոշտանգումների կանխարգելման կոմիտեն Հայաստանից պահանջել է ապահովել խոշտանգումների գործերը վարող քննչական մարմինների անկախությունը, սակայն այդ անկախությունը մինչ օրս ամբողջությամբ պահպանված չէ և Քննչական կոմիտեի ղեկավարը նշանակվում է անմիջականորեն վարչապետի կողմից և հաշվետու է նրան: Քննչական կոմիտեն, որը քննում է խոշտանգումների գործերը, պետք է վերանայի դրանց մոտեցումները և քննի դրանք իշխանության չարաշահման հետաքննության լույսի ներքո: Այս գործերով առանձնահատուկ պետք է նախապատմության և ամբողջականության ստուգումներ իրականացնել, ինչպես նաև իրականացնել հետաքննիչ ծառայողների հատուկ ուսուցում/պատրաստում, հատկապես զգայուն դեպքերի համար (մասնավոր մանկապարտեզի չարաշահումներ): Քննչական կոմիտեն շարունակում է կապված մնալ ոստիկանության հետ, չնայած այն փաստին, որ դրանք փաստացի առանձին կառույցներ են: Ստեղծվել է մի իրավիճակ, որ անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը սահմանված չէ քրեական օրենսգրքով, ուստի այն չի կարող քրեականացվել: Անմարդկային վերաբերմունքի շղթան սկսվում է ոստիկանական բաժանմունքներից և կալանավայրերից և շարունակվում մինչև բանտեր: Ոստիկանությունից ստացվող խոշտանգումների մասին հաղորդումների մեծ մասը վկայում է անցած տարվա լուրջ հետընթացի մասին (լրացնել որոշ վիճակագրություն):

Խոշտանգումները և բժշկական օգնությունը բանտում՝ իրավունքների հիմնական խախտումներից երկուսն են: Բժշկական օգնությունը փաստացի բացակայում է, բանտարկյալներին տրամադրվում են միայն դեղամիջոցներ, բայց ոչ պատշաճ խնամք և հետազոտություն, եթե հրատապություն չկա, չնայած, այն կարևոր հանգամանքին, որ անազատության մեջ գտնվող անձանց բժշկական օգնությունը Արդարադատության նախարարությունից փոխանցվել է Առողջապահության նախարարություն: Հաստատություններում խոշտանգումների դեպքերը չեն արձանագրվում և նոր ժամանած կալանավորների կարիքների և ռիսկերի պատշաճ գնահատում չի արվում:

Քրեակատարողական համակարգում առկա է հանկարծակի մահվան դեպքերի անբավարար քննություն և անվստահելի վիճակագրություն, ընդհանրապես, մահացության դեպքերը հազվադեպ են հետաքննվում, իսկ ինքնասպանության դեպքերն ընդհանրապես չեն քննարկվում և նույնիսկ չեն ընդունվում որպես խնդիր:

Քրեակատարողական հիմնարկում տեղի ունեցած հանցագործությունները և խոշտանգումների դեպքերը պետք է քննեն հատուկ պատրաստվածություն ունեցող ստորաբաժանումները: Քննություն իրականացնող սպաներն այժմ և՛ գիտելիքների, և՛ հմտությունների պակաս ունեն: Քննչական թիմում հոգեբույժ և հոգեբան փորձագետների ընդգրկմանն ուղղված ավելի ներգործուն ջանքեր են պետք:

Պետությունը պարտավոր է խոշտանգումների, վատ, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վարքագծի գոհերին որոշակի փոխհատուցում տրամադրի, հատկապես, եթե դա

իրավապահների կողմից իրականացված վարքագիծ է, ինչպես նաև խոշտանգումների գոհերին, վկաներին և նրանց ընտանիքների անդամներին պարտավոր է տրամադրել որակյալ հոգեբանական վերականգնողական օգնություն:

Անագատության մեջ գտնվող անձանց նախապես ազատ արձակելու հրավույնը.

Վաղաժամկետ ազատման համակարգը պարզ և կանխատեսելի չէ: Բշխանությունները միջոցներ չեն ձեռնարկում ոչ միայն բանտարկյալներին, այլև ողջ հանրությանը բավարար չափով տեղեկացնելու, թե ինչ է նշանակում նախաազատում, ինչ գործընթաց է դա և ովքեր կարող էին դրանից օգտվել: Բանտարկյալների համար չկան բավարար բովանդակալից հնարավորություններ, որպեսզի նրանք կարողանան միավորներ ստանալ վաղաժամկետ ազատ արձակման համար:

Պետք է ավելի շատ կոլեկտիվ ջանքեր գործադրվեն քրեական արդարադատության համակարգում արդյունավետ համագործակցության ուղղությամբ՝ վերականգնողական արդարադատությանը առաջնահերթություն տալու համար:

Խմբի անդամները չեն կարողանում հանդիպումներ ունենալ այն կալանավորված անձանց հետ, ում վրա դրված է հանդիպումների արգելք, մինչդեռ խմբի վրա այդ արգելքները պետք է չտարածվեն, իրենք պետք է անարգել հանդիպումների հնարավորություն ունենային անձանց հետ:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ինստիտուցիոնալ խնդիրները և հոգեկան առողջության ոլորտի էլ ավելի արմատական բարելավման անհրաժեշտությունը շարունակում է մնալ արդիական:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԸ

2020 թվականին Կառավարությունն ընդունեց ՀՀ ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող՝ 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը¹: Այդուհանդերձ, մի շարք օբյեկտիվ ու սուբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված, հետագա բարեփոխումների թե՛ ժամանակացույցը և թե՛ բովանդակությունը բավականին տարբերվեցին նախատեսվածից:

2020 թվականին ոստիկանության բարեփոխումների համակարգման համար վարչապետի գլխավորությամբ ստեղծվեց² համապատասխան խորհուրդը, որում ներգրավվեցին նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները: Բարեփոխումների հիմնական պատասխանատու նշանակվեց Արդարադատության նախարարությունը: 2023 թ. հունվարին ստեղծվեց Ներքին գործերի նախարարությունը, որը դարձավ բարեփոխումների հիմնական պատասխանատուն, իսկ ներքին գործերի նախարար նշանակվեց ոստիկանապետ Վահե Ղազարյանը: Դրանից անմիջապես հետո քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, հայտարարելով, որ Վահե Ղազարյանն

¹ ՀՀ ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին 23 ապրիլի 2020 թվականի 638-Լ կառավարության որոշում: <https://www.arlis.am/documentview.aspx?docID=141877>

² Ոստիկանության բարեփոխումները համակարգող խորհուրդ ստեղծելու, խորհրդի անհատական կազմը և աշխատակարգը, խորհրդի անհատական կազմում ներգրավվող հասարակական կազմակերպությունների մրցույթի կարգը հաստատելու մասին ՀՀ վարչապետի որոշում, 6 օգոստոսի 2020 թվականի 903-Ս: <https://www.irtek.am/views/act.aspx?aid=106627>

արմատապես դեմ է իրական բարեփոխումների իրականացմանը, լքեցին Ոստիկանության բարեփոխումները համակարգող խորհուրդը³:

Այսպիսով, վերջին տարիներին որևէ փոփոխություն չեղավ ոստիկանության պահվածքում, կառուցվածքում ու կարողություններում՝ հավաքների ու բողոքի ցույցերի սպասարկման մասով: Զանգվածային միջոցառումների սպասարկման հիմնական պատասխանատու ստորաբաժանումը ոստիկանության գործերն են, որոնք իրենց կառուցվածքով, գիտելիքներով ու, որոշակի առումով, սպառազինությամբ ոչ թե ոստիկանական, այլ զինվորական (հրաձգային) ստորաբաժանում են:

Թեև ներդրվեց Պարեկային ծառայությունը, որը էապես բարելավեց արտաքին ծառայության կողմից հանցավորության դեմ պայքարը և ստեղծեց բոլոր նախադրյալները ոստիկանի՝ որպես հանրությանը ծառայողի կերպարի ստեղծման համար, սակայն ոստիկանության ղեկավարության կողմից խրախուսվեց ծառայությունը՝ ձևի, այլ ոչ բովանդակության համար, ինչպես նաև խաթարվեց բոլոր քաղաքացիների նկատմամբ հավասար վերաբերմունքով դրվածքի (և արտոնյալների բացառման) հաստատումը: Ավելին, տարեց տարի պարեկներն ավելի շատ սկսեցին ներգրավվել կանոնադրությամբ չնախատեսված գործառույթների մեջ, որի հետևանքով թերակատարվում են իրենց հիմնական գործառույթները:

Որևէ էական առաջընթաց չնկատվեց հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման ուղղությամբ (բացի արտաքին ծառայությունից): Ի հակառակ ռազմավարությամբ նախատեսվածի, որևէ փոփոխություն չկրեց հանցավորության վիճակագրության վարումը, որը մանիպուլյատիվ է և հանրության մոտ ստեղծում է իրականությունից կտրված պատկեր (օրինակ՝ 5 տարվա կտրվածքով սպանությունների 75 տոկոսը համարվում է «բացահայտված», բայց դատարան է հասել նման գործերի ընդամենը 27 տոկոսը):

Վերջին տարիներին ոչ միայն որևէ դրական փոփոխություն չի եղել խոշտանգումների ու վատ վերաբերմունքի բացառման ուղղությամբ, այլև նվազեցվել են դա կանխող գործիքները (օրինակ՝ անջատվել են դոնորների միջոցներով ոստիկանության բաժիններում տեղադրված տեսախցիկները): 2023 թվականին արձանագրվել է վերջին 10 տարում նախադեպը չունեցող՝ բաժնում փաստաբանի նկատմամբ բռնության 3 դեպք:

Ոստիկանությունում չկա հակակոռուպցիոն քաղաքականություն. և որևէ ոստիկան որևէ փուլում չի անցնում բարեվարքության ստուգում, իսկ ատեստավորման որոշ բաղադրիչներ (մասնագիտական քննությունն ու հարցազրույցը) գործնականում կրում են ձևական բնույթ:

Վերջին տարիներին ոստիկանությունը նաև աչքի ընկավ դոնոր-հանրության ներկայացուցիչներին սխալ տեղեկություններ տրամադրելով, դոնորների հետ կապված մատակարարումներում կոռուպցիոն սկանդալով, ինչպես նաև սեփական սխալի պատճառով դոնորների միջոցները վատնելով:

Շարունակում է մտահոգիչ մնալ ոստիկանությունում կաշառակերության և կոռուպցիայի այլ դրսևորումների բարձր մակարդակը: Համատարած են արժանահավատ ահազանգերը և իրավապահների բացահայտումները՝ ոստիկանության այս կամ այն ստորաբաժանումում կոռուպցիոն դրսևորումների մասին⁴: Ընդ որում, թեև տեխնոլոգիաները հնարավորություններ ստեղծում են այդ

³ ՀԿ-ները դադարեցնում են աշխատանքը Ոստիկանության բարեփոխումները համակարգող խորհրդում: <https://uic.am/16581>

⁴ Բացահայտվել է կաշառքի դիմաց վարորդական վկայականների իրացման հանցավոր շղթա. 7 անձի մեղադրանք է ներկայացվել: <https://www.tert.am/am/news/2023/12/02/investigative/4041827>

Երեք անձի առաջարկել են 150 000-ական դրամի դիմաց ոստիկանությունում աշխատանքի տեղավորել. նրանք համաձայնել են: <https://news.am/arm/news/791404.html>

դրսևորումներից շատերը կանխարգելելու համար, սակայն դրանց ներդրման միտում ուստիկանությունում չի նկատվում:

Վերոգրյալ խնդիրների փոքր մասի լուծումը ենթադրում է հետագա քննարկումներ ու ուսումնասիրություններ, բայց մնացածի լուծման նպատակով առաջարկվում է.

Առաջարկություններ

- *Ոստիկանության բաժիններում տեղադրել տեսախցիկներ, որոնց տեսադաշտում կլինեն բոլոր այն տարածքները, որտեղ կարող են լինել բաժին բերված անձինք,*
- *Ներդնել քրեական հետախուզության ծառայողների խրախուսման՝ քաղաքացիների ցուցմունքների հետ չկապված ապացույցների հավաքագրումը խթանող համակարգ,*
- *Էապես վերանայել հանցավորության վիճակագրության վարման կարգը և դրանում, որպես հիմնական ցուցանիշ, ունենալ պատժի անխուսափելիության մեխանիզմի իրագործումը, վերանայել «բացահայտված հանցագործություն» եզրույթի սահմանումը,*
- *Ստեղծել քրեական հետախուզության աշխատակիցների կողմից նախաքննությանը արդյունավետ աջակցելը խթանող մեխանիզմներ, քննարկել ոստիկանությանը քննչական գործառույթներ վերադարձնելու և դետեկտիվների ներդրման հարցը,*
- *Ավելացնել քրեական հետախուզության արդյունավետ գործիքները, սկսել անմիջականորեն իրականացնել հեռախոսային խոսակցությունների վերահսկում միջոցառումը,*
- *Հստակ կանոնակարգել քաղաքացիներից հաղորդումներ ընդունելը, ինչպես նաև ստեղծել հաղորդում տված կամ որևէ հարցով ոստիկանություն դիմած քաղաքացիներից արձագանքի հավաքագրման մեխանիզմ,*
- *Ստեղծել պաշտոնների նշանակման հստակ ու նվազագույն հայեցողության տեղ թողնող կարգավորումներ, որոնք հիմնված կլինեն ծառայության նպատակների և ոչ ձևի վրա,*
- *Ոստիկանների կարգապահական պատասխանատվության համար ստեղծել նվազագույն հայեցողությամբ սանդղակներ և կապել դրանք ծառայության վերջնարդյունքների և ոչ ձևի հետ,*
- *Բացառել Պարեկային ծառայության՝ իր կանոնադրական նպատակներին կամ ծառայության ձևերին հակասող գործառույթների իրականացման մեջ ներգրավելը,*
- *Ստեղծել մեխանիզմ, որով պարեկային ծառայողները պարտավոր են անմիջապես զեկուցագիր կազմել բոլոր այն դեպքերով, երբ ՃԵԿ խախտած վարորդը ներկայանում է որպես որևէ իրավապահ մարմնի ծառայող,*
- *Հստակ օրենսդրական մակարդակում կանոնակարգել «Ստուգման ենթակա չէ» նշումով հատուկ կտրոնների տրամադրման կարգը, օգտագործման նպատակը և ներկայացման դեպքում պարեկի գործողությունները,*
- *Ոստիկանության գործերի ապառազմականացմամբ ստեղծել զանգվածային միջոցառումները սպասարկող պրոֆեսիոնալ ոստիկանության ստորաբաժանում,*

ՆԳՆ ոստիկանության ներքին անվտանգության վարչության ծառայողները բացահայտել են ոստիկանության պաշտոնատար անձանց կողմից կաշառք ստանալու առերևույթ հանցագործության դեպքեր: <https://www.police.am/news/view/nav200123ngn.html>

- Վերանայել ատեստավորման մասնագիտական քննությունների հարցաշարերը՝ ներառելով մասնագիտական գիտելիքները պատշաճ մակարդակի ստուգող հարցեր,
- Ներդնել ոստիկանության բարձրագույն խմբի բոլոր ծառայողների՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովով բարեվարքության ստուգման մեխանիզմ,
- Մշակել և ներդնել ոստիկանության հակակոռուպցիոն ռազմավարություն՝ ավելացնելով բոլոր հնարավոր գործընթացների ներքին վերահսկելիությունն ու արտաքին թափանցիկությունը:

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ

ՀՈՂՎԱԾ 4

Ներքին բարեփոխումները

Կողմերը պետք է համագործակցեն հետևյալ ոլորտներում՝

- (a) Ժողովրդավարական հաստատությունների կայունության ու արդյունավետության և իրավունքի գերակայության զարգացում, համախմբվածություն ու ամրապնդում,
- (b) մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի ապահովում,
- (c) դատական և իրավական բարեփոխումների հետագա առաջընթացի ապահովում այնպես, որ երաշխավորվի դատական համակարգի, քրեական հետապնդման և իրավապահ համակարգի անկախությունը, որակն ու արդյունավետությունը,
- (d) վարչական կարողությունների ամրապնդում և իրավապահ մարմինների անկողմնակալության և արդյունավետ աշխատանքի երաշխավորում,
- (e) պետական կառավարման ոլորտում բարեփոխում և հաշվետու, արդյունավետ, թափանցիկ ու մասնագիտացված քաղաքացիական ծառայության հետագա զարգացում, և
- (f) կոռուպցիայի դեմ պայքարում արդյունավետության ապահովում, մասնավորապես, կոռուպցիայի դեմ պայքարում միջազգային համագործակցության ամրապնդման և համապատասխան միջազգային այնպիսի իրավական փաստաթղթերի արդյունավետ իրականացման նպատակով, ինչպես օրինակ՝ ՄԱԿ-ի 2003 թվականի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիան:

ՀՈՂՎԱԾ 12

Իրավունքի գերակայությունը և մարդու իրավունքների ու հիմնարար

ազատությունների հարգումը

2. Կողմերը պետք է լիովին համագործակցեն իրավապահ, կոռուպցիայի դեմ պայքարի և արդարադատության իրականացման ոլորտների հաստատությունների արդյունավետ գործունեության հարցում: Կոռուպցիայի դեմ պայքարը կարելի է բաժանել մի քանի գործընթացների, որոնցից յուրքանցյուրն էլ ունի իր բաղադրիչները: Դրանց բոլորի համապարփակ, միմյանց հետ ներդաշնակ և համահունչ իրական կյանքի կոչելը միայն, կարող է գնահատվել որպես կոռուպցիայի դեմ պայքարի կամային և արդյունավետ պայքար:

ՀՈՂՎԱԾ 16

Կազմակերպված հանցավորության և կոռուպցիայի դեմ պայքարը

1. Կողմերը պետք է համագործակցեն քրեական և ապօրինի գործունեության, ներառյալ այնպիսի անդրազգային գործունեության՝ կազմակերպված կամ այլ ձևով, դեմ պայքարում և դրանց կանխարգելման գործում ինչպես օրինակ՝

- (a) միգրանտների ապօրինի տեղափոխումը և մարդկանց թրաֆիքինգը,
- (b) հրազենի, այդ թվում՝ ՓՏԶԹԶ-ների մաքսանենգությունը և առևտուրը,
- (c) արգելված թմրանյութերի մաքսանենգությունը և ապօրինի շրջանառությունը,
- (d) ապրանքների մաքսանենգությունը և առևտուրը,
- (e) տնտեսական և ֆինանսական ապօրինի գործունեությունը, ինչպես օրինակ՝ կեղծումը, հարկային խարդախությունը և պետական գնումների հետ կապված խարդախությունը,
- (f) միջազգային դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրերի միջոցների յուրացումը,
- (g) ակտիվ և պասիվ կոռուպցիան՝ և՛ մասնավոր, և՛ պետական ոլորտներում,
- (h) փաստաթղթերի կեղծումը և կեղծ հայտարարությունների տարածումը, և
- (i) կիբեռնահանցագործությունը:

2. Կողմերը պետք է ամրապնդեն իրավապահ մարմինների միջև երկկողմ, տարածաշրջանային և միջազգային համագործակցությունը՝ ներառյալ Եվրոպական միության իրավապահ ոլորտում համագործակցության գործակալության (Եվրոպոլի) և Հայաստանի Հանրապետության համապատասխան մարմինների միջև համագործակցության հնարավոր զարգացումը: Կողմերը պարտավորություն են ստանձնել արդյունավետորեն ներդնելու համապատասխան միջազգային ստանդարտները, մասնավորապես այն ստանդարտները, որոնք ամրագրված են ՄԱԿ-ի 2000 թվականի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիայում և դրա երեք արձանագրություններում: Կողմերը պետք է համագործակցեն կոռուպցիայի

կանխարգելման և դրա դեմ պայքարի հարցերով ՄԱԿ-ի 2003 թվականի Կոռուպցիայի դեմ կոնվենցիային, Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարի երկրների խմբի (ԳՐԵԿՕ) և ՏՀԶԿ-ի առաջարկություններին համապատասխան, գույքի հայտարարագրման ոլորտում թափանցիկության ապահովման, խախտումների մասին տեղեկացնող անձանց պաշտպանության և իրավաբանական անձանց վերջնական շահառուների վերաբերյալ տեղեկությունների հրապարակման հարցերով:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (ԿԿՀ)

ա/ ԿԿՀ կարողությունների ընդլայնում

ՀՀ կառավարության 2022թ. փետրվարի 3-ի թիվ 114-Ս որոշմամբ փոփոխություն կատարվեց ՀՀ կառավարության 2020թ. սեպտեմբերի 10-ի թիվ 1500-Ս «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանույնների աշխատողների քանակը և հաստիքացուցակը հաստատելու մասին» որոշման մեջ, որի արդյունքում ԿԿՀ-ի հաստիքների թիվը հասավ 57-ի:

բ/ ԿԿՀ գործառնությունների ընդլայնում

ԿԿՀ մասին օրենքում ԱԺ կողմից 2022թ. հունիսին 9-ին կատարված փոփոխությունների (ՀՕ-164-Ն) արդյունքում նախընտրական հիմնադրաբան կատարվող, ինչպես նաև հանրաքվեի և

տեղական հանրաքվեի քարոզչության նպատակով կատարված, նվիրատվությունների, ծախսերի և դրանց հաշվարկման նկատմամբ վերահսկողությունը ԿԿՀ-ի կողմից կսկսվի իրականացվել միայն 2024թ. հունվարի 1-ից՝ նախկինում սահմանված 2023թ. հունվարի 1-ի փոխարեն:

ԱԺ կողմից 2022թ. դեկտեմբերի 7-ին ԿԿՀ մասին օրենքում կատարված լրացումների և փոփոխությունների (ՀՕ-541-Ն, ուժի մեջ մտավ 2023թ. հունվարի 2-ին) արդյունքում ԿԿՀ-ին է վերապահվել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից նվերներ ընդունելու սահմանափակումների պահպանմանը հետևելը, նվերների հաշվառման գործընթացը կանոնակարգելը և վերահսկելը, ինչպես նաև նվերների հաշվառման ռեեստրի վարելու իրավասությունը: Նույն օրենքով սահմանվել են նաև ԿԿՀ-ի կողմից իրավիճակային հայտարարագիր պահանջելու հիմքերը:

Վերջապես, նույն օրը (2022թ. դեկտեմբերի 7) ԱԺ-ն մեկ այլ օրենքով (ՀՕ-496-Ն, ուժի մեջ մտավ 2023թ. հունվարի 1-ին) ևս լրացումներ կատարեց ԿԿՀ մասին օրենքում, որով ԿԿՀ-ին վերապահվել է նաև «ազդարարման դեպքում իր իրավասության ոլորտին առնչվող յուրաքանչյուր հաղորդման հաշվառումը, քննարկման ապահովումը, միջոցների ձեռնարկումը, վիճակագրության վարումը և «Ազդարարման համակարգի մասին» օրենքով սահմանված մյուս գործառնությունների իրականացումը»:

գ/ ԿԿՀ իրավակիրառ գործունեությունը

2022թ. ընթացքում ԿԿՀ-ն հարուցել է 143 վարույթ, որոնցից 118-ը՝ հայտարարագրմանն առնչվող իրավախախտումների վերաբերյալ, 15-ը՝ դատավորների նկատմամբ հարուցված կարգապահական վարույթներ, 8-ը՝ անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտումների հիմքով, 1-ը՝ անհամատեղելիության և իրավիճակային շահերի բախման հիմքով և 1-ը՝ միայն իրավիճակային շահերի բախման հիմքով: Նշված վարույթներից երկուսի դեպքում (մեկը հայտարարագրմանն առնչվող իրավախախտումների վերաբերյալ, իսկ մյուսը՝ անհամատեղելիության և իրավիճակային շահերի բախման հիմքով հարուցված) դրանց վերաբերյալ նյութերը ներկայացվել են ՀՀ գլխավոր դատախազություն:

2022թ. ընթացքում ԿԿՀ-ն իրականացրել է 42 դիմումի և 10 մեղիա հրապարակման ուսումնասիրություն և դրանց հիման վրա տվել է խորհրդատվություն: Դրանց մեծ մասը՝ 33 դիմում և 5 մեղիա հրապարակում վերաբերում էին անհամատեղելիության պահանջներին: Մեկ դիմումի ուսումնասիրության արդյունքում հարուցվել է վարույթ, որի արդյունքում ընդունվել է անհամատեղելիության պահանջի խախտման վերաբերյալ եզրակացություն (Շիրակի մարզպետի տեղակալը միաժամանակ նաև համայնքի ավագանու անդամ էր): Անհամատեղելիության պահանջների խախտման և իրավիճակային շահերի բախման հիմքով 2022թ. հարուցվել է ևս 3 վարույթ, որոնք նույն թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ գտնվում էին ընթացքի մեջ: Բացի ստացված դիմումներից և մեղիա հրապարակումներից, ԿԿՀ-ն իր նախաձեռնությամբ իրակացրել է 107 ուսումնասիրություն՝ պատգամավորների կողմից անհամատեղելիության պահանջների պահպանման վերաբերյալ: Դրանք 2022թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ գտնվում էին ընթացքի մեջ: Այդ ուսումնասիրությունների հիմքով հարուցվել են վարույթներ 5 պատգամավորների նկատմամբ: Դրանցից 4-ի նկատմամբ ընդունվել է խախտումների բացակայության վերաբերյալ եզրակացություն, իսկ 1 պատգամավորի դեպքում 2023թ. առաջին եռամսյակի դրությամբ վարույթն ընթացքի մեջ է:

2022թ. ԿԿՀ-ն իրականացրել է պետական պաշտոնի հավակնող 515 անձի բարեվարքության ուսուցնասիրություն: Հանձնաժողովը տվել է 505 եզրակացություն, որից 278-ը դրական, 64-ը բացասական և 163-ը դրական՝ վերապահումով: Հակակոռուպցիոն ռազմավարության ամփոփիչ մոնիտորինգային զեկույցում բացակայում է որևէ տեղեկատվություն, թե ինչ որոշումներ են ընդունվել այն պաշտոնյաների նշանակման վերաբերյալ, որոնց դեպքում տրվել են բացասական եզրակացություններ: 2022թ. ընթացքում ստուգվել և վերլուծվել է շուրջ 5,000 հայտարարագիր: Հարագրերը ժամանակին չներկայացնելու, խախտմամբ ներկայացնելու, կամ նրանցում սխալ տվյալներ ներկայացնելու առնչությամբ հարուվել է 118 վարույթ, որից 107-ը կարճվել է, 10-ի դեպքում նշանակվել է տուգանք, իսկ 1-ի դեպքում՝ նախազգուշացում՝ հայտարարագիրը լրացնելու պահանջները խախտելու համար:

Կորուպցիայի կանխարգելման ուղղությամբ կատարված բարեփոխումները և ի հայտ եկած խնդիրները

ա/ Հայտարարագրման համակարգի կատարելագործում

2023թ. փետրվարից գործարկվել է հայտարարագրման նոր էլեկտրոնային համակարգը, ինչի արդյունքում դյուրացվել է հայտարարների լրացման գործընթացը, այն դարձել է ավելի թափանցիկ և բացառվել է մարդկային գործոնի ազդեցությունը: Մյուս կարևոր փոփոխությունը, որն իրականացվել է ԱԺ կողմից 2022թ. դեկտեմբերի 7-ին Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքում կատարված լրացումների և փոփոխությունների (ՀՕ-540-Ն) արդյունքում, դա հայտարարատու անձանց շրջանակի ընդլայնումն է՝ ներառելով պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, պետության կողմից հիմնադրած հիմնադրամների, 50 և ավելի տոկոս ՀՀ և համայնքային մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների ղեկավարներին:

բ/ Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների հստակեցում

2022թ. դեկտեմբերի 7-ին ԱԺ կողմից ընդունված 540-Ն օրենքով Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքում կատարված լրացումների և փոփոխությունների արդյունքում ներմուծվեցին մի շարք կարևոր կոնցեպտներ: Մասնավորապես, օրենսդրորեն ամրագրվեց պոտենցիալ շահերի բխման իրավիճակը և այն կանխելու մեխանիզմները, ներդրվեց նաև մասնավոր շահ հասկացությունը: Բացի այդ, կատարելագործվեց հավատարմագրման ինստիտուտը, և այլն:⁵

Կորուպցիոն հանցագործությունների քննություն

ա/ Հակակոռուպցիոն կոմիտեի կարողությունների ընդլայնում

2023թ. հունվարի 1-ի դրությամբ կոմիտեում պաշտոնավարում են 32 ինքնավար պաշտոն զբաղեցնող և 40 օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող անձինք: ՀՀ վարչապետի 2022թ. դեկտեմբերի 6-ի 1450-Ա որոշմամբ 2023թ. հունվարի 1-ից մինչև հունիսի 1-ը կոմիտեի հաստիքների թիվը կավելանա 100-ով, որը կիրականացվի փուլային կարգով: Պետք է նշել, որ այս կարևոր քայլի մասին կոմիտեի կայքում (<https://www.anticorruption.am/hy/>) ոչ մի տեղեկատվություն չկա: Մյուս կողմից, կարելի է ենթադրել, որ վարչապետի որոշումները պարտադիր են կատարման, ապա այս տարվա հունիսի 1-ից կոմիտեի հաստիքների թիվը պետք է որ արդեն 100-ով ավելացված լիներ: Միայն այդ ավելացումից հետո հնարավոր կլինի

⁵ Նշված օրենքով նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ներդրվեց հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուի ինստիտուտը:

ստեղծել կոմիտեի տարածքային բաժիններ, որը նախատեսված է 2019-2022թթ. ռազմավարությամբ:

- **Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարաններ**

2022թ. հուլիսին ստեղծվեց հակակոռուպցիոն դատարանը և մինչև նույն տարվա ավարտը այն ամբողջովին ձևավորվեց՝ ներառելով 10 դատավոր, ովքեր մասնագիտացված են կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով, իսկ 5-ը՝ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով:

2022թ. դեկտեմբերի 23-ին Դատական օրենսգրքում կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում սահմանվեց, որ 2024թ. հունվարի 1-ից կսկսի գործել Հակակոռուպցիոն վերաքննիչ դատարանը: Մինչ այդ վերաքննիչ քրեական և վերաքննիչ քաղաքացիական դատարաններում կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով կայացած դատական ակտերի՝ վերաքննության կարգով վերանայումն իրականացնում էին այդ դատարաններից յուրաքանչյուրի կազմում գործող 3-ական դատավորներ, որոնք նշանակվեցին 2022թ. ընթացքում:

Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների համակարգն ամբողջացավ Վճռաբեկ դատարանում հակակոռուպցիոն պալատի ստեղծմամբ: Այն ստեղծվեց ԱԺ կողմից 2022թ. փետրվարի 9-ին Դատական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու արդյունքում: Նույն տարվա հունիսի 27-30-ին կայացած ԱԺ նիստերին ընտրվեցին նշված Պալատի 10 դատավորներից 6-ը: Հետագայում ընտրվեցին նաև Թագավորները:

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձում

ա/ Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված կառուցակարգերի ստեղծում

2022–2023թթ. ընթացքում նոր կառուցակարգեր չեն ստեղծվել: ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչության աշխատանքը ներկայացված է հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի զեկույցում (տե՛ս Միջոցառում 34):

ՀԸԳՀ Հանրային գնումների համակարգ

Հանրային գնումների ոլորտում 2022թ. կատարված ամենալուրջ փոփոխությունը դա գնումների բողոքարկման համակարգի արտադատական բաղադրիչի վերացումն էր, որը նախատեսված էր և՛ Պետական ֆինանսների համակարգի բարեփոխումների ռազմավարությամբ և և՛ դրա իրականացման 2019-2023թթ. միջոցառումների ծրագրով, և՛ Հակակոռուպցիոն ռազմավարությամբ և՛ դրա իրականացման 2019-2023թթ. միջոցառումների ծրագրով: Այդ փոփոխությունն իրականացվեց ՀՀ գնումների մասին օրենքում կատարված փոփոխությունների և լրացումների մասին օրենքի միջոցով (ՀՕ-4-Ն), որն ընդունվեց ԱԺ-ի կողմից 2022թ. հունվարի 21-ին և ուժի մեջ մտավ նույն թվականի հունիսի 1-ին: Դրանով վերացվեց գնումների բողոքներ քննող անձի արտադատական ինստիտուտը և թողնվեց միայն դատական կարգով (քաղաքացիական իրավունքի վրա հիմնված) այդ բողոքների քննության հնարավորությունը: Օրենսդրական այս փոփոխությունը նախաձեռնած ՀՀ ֆինանսների նախարարությունը, որը Հայաստանի հանրային գնումների համակարգի լիազոր մարմինն է, հիմնավորում էր որպես Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) պետական գնումների համաձայնագրով և ՀԸԳՀ-ով (տե՛ս Համաձայնագրի Հոդված 271-ը) ՀԳնումների

⁶ ԱՀԿ-ի պետական գնումների համաձայնագրով և ՀԸԳՀ-ի Հոդված 271-ով Հայաստանի ստանձնած պարչտավորություններից է գնումների բողոքարկման համակարգի անկախության և արդյունավետության բարձրացումը: Ֆինանսների նախարարության կարծիքով դրան խանգարում էր գնումների գործող

մասին վերը նշված օրենքում կատարված լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքով ևս մեկ կարևոր կետ մտցվեց Հայաստանի հանրային գնումների համակարգում: Ըստ դրա, օրենքով սահմանվեցին նոր սկսվող ներդրումային ծրագրերի իրականացման համար գնումների այլընտրանքային պայմանավորվածությունների իրականացման այն պայմանները, որոնք գնումների հետ հարաբերությունները կարգավորող իրավական ակտերում նախատեսվելու դեպքում հնարավոր կլինի կիրառել ազգային ընթացակարգերը: Մի լրացում ևս, որը կատարվեց գնումների մասին օրենքում, որով կուսակցությունների ֆինանսական հաշվետվությունների աուդիտը սահմանվեց:

Թափանցիկ և հաշվետու կառավարում

ա/ Գաղտնագրված տեղեկությունների ծավալի ընդլայնում

Մի քանի իրավապաշտպան ՀԿ-ներ համատեղ կարծիք են հրապարակել, որն անդրադառնում է 04.11.2022 թ.-ին Ազգային ժողով ներկայացված «Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի նախագծին, որը մի շարք ասպեկտներով չի համապատասխանում առաջադեմ միջազգային փորձին և չափանիշներին, ինչպես նաև պարունակում է տեղեկատվության ազատության իրավունքի անհամաչափ սահմանափակման ռիսկեր:

Ըստ այդմ, առաջարկվում է վերանայել դրանում տեղ գտած մի շարք իրավակարգավորումներ և ըստ այդմ վերախմբագրել իրավական դրույթները:

Հակակոռուպցիոն 2019–2022թթ. ռազմավարություն

Համաձայն մոնիտորինգային զեկույցի՝ Ռազմավարության 43 միջոցառումներից լիովին կատարվել է 25-ը, մեծամասամբ՝ 8-ը, մասնակի՝ 7-ը և չի կատարվել 3-ը (11 (Էթիկայի հանձնաժողովների և բարեվարքության կազմակերպիչների ինստիտուտի ձևավորում և գործարկում), 14 (Քաղաքացիական ծառայության ոլորտում արժանիքահեն համակարգի ապահովում) և 33 (Կոռուպցիոն հանցագործությունների քննության և բացահայտման շրջանակում միջազգային համագործակցության ամրապնդում) միջոցառումները):

Վերհանված թերություններ. չնայած վերը նշված տեղի ունեցած փոփոխություններին, տեղացի և օտարերկրյա փորձագետների կողմից կան վեր հանված սկզբունքային թերություններ, որոնք կարող են կասկածի տակ դնել կոռուպցիայի դեմ պայքարի իրական քաղաքական կամքի առկայությունն ու արդյունավետությունը: Այդ թերությունները ստորև.

ա/ Հակակոռուպցիոն քաղաքականություն

Մեծ ուշադրություն չի դարձվում կոռուպցիոն բարձր ռիսկեր պարունակող ոլորտների վրա (հարկային, մաքսային, գնումներ և այլն):

Հակակոռուպցիոն՝ վերջերս ընդունված ռազմավարության մեջ բացակայում է ակնկալվող արդյունքների, միջոցառումների և ցուցիչների միջև հստակ կապը:

Հակակոռուպցիոն քաղաքականությունների շատ փաստաթղթեր շարունակում են մնալ թղթի վրա:

Ռազմավարության կիրարկմանը խանգարում են ինստիտուցիոնալ համակարգի շատ բաղադրիչների ռեսուրսների անբավարարությունը, ինչպես նաև նրանց ղեկավար մարմինների հաճախակի փոփոխությունը:

Առաջարկություններ.

արտադատական բաղադրիչի ցածր արդյունավետությունը, և դրանից ելնելով, առաջարկվեց չեղարկել այդ բաղադրիչը:

- *Հակակոռուպցիոն քաղաքականության փաստաթղթերում, առաջին հերթին, ռազմավարության և նրա միջոցառումների ծրագրում, առանձին մոտեցում պետք է կիրառվի բարձր ռիսկեր պարունակող ոլորտներում հակակոռուպցիոն քաղաքականության նկատմամբ:*
- *Նույնը վերաբերում է նաև բարձրաստիճան քաղաքական պաշտոն զբաղեցնող պաշտոնյաների դեպքին:*
- *Հակակոռուպցիոն քաղաքականություն մշակելիս կիրառել կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդները՝ վեր հանելու համար այն հիմնահարցերը, որոնք պետք է լուծվեն այդ քաղաքականության կիրարկման արդյունքում:*
- *Հակակոռուպցիոն քաղաքականության փաստաթղթերը պետք է հիմնվեն պետական տարբեր մարմիններից նախապես հավաքագրված և վերլուծված զեկույցների վրա:*
- *Հզորացնել Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կարողությունները և ընդլայնել նրա լիազորությունները:*
- *Հակակոռուպցիոն ռազմավարության և նրա իրականացման միջոցառումների ծրագրի մոնիտորինգի և գնահատման գործընթացում ընդգրկել նաև դրանց բյուջեի կատարողականի զեկույցը:*
- *Հակակոռուպցիոն ռազմավարության և նրա իրականացման միջոցառումների ծրագրի մոնիտորինգի և գնահատման զեկույցներում ավելի լուրջ վերլուծել և վեր հանել թերացումների պատճառները:*

բ/ Շահերի բախում և հայտարարագրեր

Դեռևս բացակայում է շահերի բախման կարգավորման միասնական համակարգ հանրային տարբեր ծառայողների կատեգորիաների համար:

Շահերի բախման օրենսդրական կարգավորումները շարունակում են մնալ թղթի վրա:

Բարեվարքության կանոնների հետևողական կիրարկումը խոչընդոտվում է համապատասխան մարմինների, մասնավորապես ԿԿՀ-ի, անբավարար կարողություններով:

Առաջարկություններ.

- *Շարունակել կատարելագործել շահերի բախման վերաբերյալ օրենսդրությունը, մասնավորապես, սահմանել, որ հանրային մարմնի ղեկավարի կամ այդ մարմնում բարեվարքության պատասխանատուին պարտավորեցնել լուծել շահերի բախման այն իրավիճակները, որոնց մասին հայտնում են այդ մարմնից դուրս գտնվող աղբյուրները, օրինակ, լրատվամիջոցները: Անհրաժեշտ է նաև կարգավորել ուղղակի վերադաս չունեցող հանրային պաշտոնյաների դեպքում ի հայտ եկող իրավիճակայնի շահերի բախման դեպքերը: Օրենսդրությամբ պետք է նաև սահմանել դատախազների, կառավարության անդամների և ավագանիների անդամների շահերի բախման լուծման առանձնահատուկ կարգավորումներ:*
- *Ապահովել շահերի բախման որոշակի դրսևորումներին առնչվող գործող օրենսդրության պատշաճ կիրարկումը: Խոսքը, մասնավորապես, գնում է այնպիսի խախտումների համար հանրային ծառայողների և պաշտոնյաների նկատմամբ պատասխանատվության միջոցներ կիրառելու մասին, ինչպիսիք են, նրանց կողմից ի հայտ եկած իրավիճակային շահերի բախման մասին չհայտնելը և դրանք չլուծելը, նվերների և հյուրասիրության ընդունման հետ կապված սահմանափակումները խախտելը, անհամատեղելիության պահանջների խախտելը,*

հետպաշտոնավարման հետ կապված սահմանափակումները խախտելը, շահերի բախման արդյունքում ընդունված որոշումները կամ կնքած պայմանագրերը չչեղարկելը, ապօրինի կերպով ստացած նվերները չբռնագանձելը, և հետպաշտոնավարման սահմանափակումների խախտումներով նախկին պաշտոնյաներին աշխատանքի ընդունումը չչեղարկելը:

- Հայտարարատուների ցանկում ավելացնել դատական համակարգի կառավարման օղակներում աշխատող դատավոր չհանդիսացող պաշտոնյաներին:
- Հայտարարագրել արտասահմանում իրենց սեփականությունը հանդիսացող մեքենաները և շարժական այլ գույքը:
- Հայտարարագրել աշխատանքի կամ ծառայության տեսքով ստացված բնեղեն նվերները:
- Հայտարարագրի շահերի մասում հայտարարագրել նաև հայտարարատուի և/կամ նրա փոխկապակցված անձանց կապն իրենց մասնաբաժինները տնօրինող հավատարմագրային կառավարում իրականացնող ընկերությունների հետ:
- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի համար ապահովել տեղեկատվության արտասահմանյան ոչ բաց աղբյուրների մատչելիությունը:
- Պրակտիկայում կիրառել իրենց հայտարարագրերում միտումնավոր կերպով կեղծ կամ ոչ լրիվ տեղեկատվություն ներկայացնող հայտարարատուներին քրեական պատասխանատվության ենթարկումը:

զ/ Գնումներ

Հանրային գնումների համակարգի հիմնական թերություններն են. վերահսկողական ոչ այնքան արդյունավետ մեխանիզմները, շահերի բախման իրավիճակներից խուսափելու թույլ կարողությունները, հակակոռուպցիոն թույլ մեխանիզմները, բաց աղբյուրների (open source) և բաց կոդերի (open code) թույլ կիրառումը:

Առաջարկություններ.

- Նվազեցնել մեկ անձից կատարվող գնումների ծավալները:
- Կատարելագործել հանրային գնումներում շահերի բախման օրենսդրությունը և պրակտիկան:
- Պրակտիկայում քրեական պատասխանատվության ենթարկել գնումների հետ կապված կոռուպցիոն հանցագործություններ կատարած ֆիզիկական և իրավաբանական անձանց:
- Պրակտիկայում կիրառել կոռուպցիոն հանցագործությունների համար նախկինում դատապարտված անձանց հետ գնման պայմանագրեր կնքելու արգելքը:
- Գնումների օրենսդրությամբ սահմանված բոլոր պատվիրատուները պետք է իրենց գնումները կատարեն էլեկտրոնային եղանակով:
- Մեքենայարդյունքային (machine-readable) դարձնել գնումների վերաբերյալ տվյալները:

դ/ Դատախազական համակարգ

Գլխավոր դատախազի ընտրությունը հիմնված չէ արժանիքահեռության սկզբունքների վրա, մրցակցային չէ և զերծ չէ քաղաքական շահերի ազդեցությունից:

Դատախազական ծառայությունը պաշտպանված չէ քաղաքական ազդեցություններից:

Համակարգում անցկացվող փակ մրցույթները և առաջխաղացման ոչ թափանցիկ մեխանիզմները թույլ են տալիս հայեցողության մեծ հնարավորություններ գլխավոր դատախազի համար:

Առաջարկություններ.

- *Դատախազական համակարգում ստեղծել հանրային վերահսկողություն իրականացնող մշտապես գործող անկախ փորձագիտական կոմիտե, որում կներգրավվեն քաղհասարակության ներկայացուցիչներ, իրավաբաններ, գիտնականներ, իրավապաշտպաններ և այլն:*
- *Թափուր պաշտոնների համար հիմնականում անցկացնել բաց մրցույթներ:*
- *Կարգապահական տույժեր նշանակելու դեպքերի համար հստակեցնել “պարտավորությունների ոչ պատշաճ կատարում” եզրույթը:*

ե/ Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգ

Համակարգը դեռևս նոր է ձևավորվում և շատ անելիքներ կան ուժեղացնելու հակակոռուպցիոն մասնագիտացված մարմինների կարողությունները և մեծացնելու նրանց թափանցիկությունը և հաշվետվողականությունը:

Բացակայում է հատուկ մարմինը, որը կստորինի ապօրինի ծագում ունեցող բռնագանձված գույքն ի շահ հասարակության և պետության, և մինչ այժմ բռնագանձված գույքը (այն, ներկա դրությամբ, ամբողջովին ստացվել է այդ գույքի սեփականատիրոջ հետ հաշտության գործարք կնքելու ճանապարհով) տրվել է Պետական գույքի կառավարման կոմիտեի տնօրինությանը: Այսինքն, փաստացիորեն, ստացվում է, որ այդ կոմիտեն, զոնե առայժմ, մասամբ կատարում է այդ հատուկ մարմնի գործառույթները:

Առաջարկություններ.

- *Ստեղծել ապօրինի ծագում ունեցող բռնագանձված գույքը կառավարող պետական մարմին:*
- *Հստակեցնել Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավարի կամ նրա քննիչների պաշտոնից ազատման հիմքերը:*

զ/ Կոռուպցիոն հանցագործությունների քրեականացում

Շարունակում են շատ ցածր մնալ գործող բարձրաստիճան պաշտոնյաների՝ կոռուպցիոն հանցագործություններով դատապարտման դեպքերը: Չկան կոռուպցիայի շնորհիվ ձեռք բերված հարստության բռնագանձման և ոչ մի դեպք: Նույնն է վիճակը նաև փողերի լվացման դեպքում: Կան հաշտության գնալու գործընթացներ, որոնց թափանցիկությունը ևս հարցական է: Տե՛ս բոլոր այդ գործընթացների (մինչ այժմ եղել է 4 այդպիսի գործընթաց, 3-ի վերաբերյալ հաղորդագրություններում մանրամասներ չեն բերվում) վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության հաղորդագրությունների լինքերը.

<https://prosecutor.am/article/2454>

<https://prosecutor.am/article/2477>

<https://prosecutor.am/article/4308>

<https://prosecutor.am/article/4317> և <https://prosecutor.am/article/4336> Երկուսն էլ նույն դեպքին են վերաբերում (ՍՕԿՍ-ի շենքը պետությանը վերադարձնելու դեպքը):

Առաջարկություններ.

- *Ավելի ակտիվ կերպով կիրարկել մասնավոր ոլորտում կաշառակերության, ոչ նյութական անհարկի առավելություն ստանալու նպատակով կաշառք տալու համար, ապօրինի հարստացման, օտարերկրյա պաշտոնատար անձի կողմից կոռուպցիոն հանցագործություն կատարելու համար, փողերի լվացման, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և անհարկի ազդեցության (trading in influence) համար քրեական քրեական հետապնդումը և պատժումը:*
- *Ակտիվ քայլեր ձեռնարկել՝ վերադարձնելու համար արտասահմանում հայտնաբերված ապօրինի ծագում ունեցող գույքը:*

ՀԱԿԱԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

ՀՈՂՎԱԾ 84



Կողմերը պետք է ամրապնդեն իրենց երկխոսությունը և համագործակցությունը՝ ուղղված Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) «Արժանապատիվ աշխատանք» ծրագիրը, զբաղվածության քաղաքականությունը, աշխատավայրում առողջությունը և անվտանգությունը, սոցիալական երկխոսությունը, սոցիալական պաշտպանությունը, սոցիալական ներգրավվածությունը, կանանց և տղամարդկանց հավասարությունը և խտրականության բացառումը խթանելուն՝ դրանով նպաստելով ավելի շատ և ավելի լավ աշխատատեղերի ստեղծմանը, աղքատության կրճատմանը, սոցիալական համերաշխության ընդլայնմանը, կայուն զարգացմանը և կյանքի որակի բարելավմանը:

Հայաստանի Սահմանադրությունը ներկայումս թերանում է հավասարության պահպանման և խտրականության կանխարգելման հարցում: Սահմանադրության 29-րդ հոդվածը, որն անդրադառնում է խտրականությանը, չունի հստակ սահմանում, ինչը երկիմաստության տեղ է թողնում պաշտպանության շրջանակների և խտրականության արգելված ձևերի վերաբերյալ: Ավելին, այն չի պարտադրում պետությանը դրական գործողություններ իրականացնել էական անհավասարությունները շտկելու համար: Թեև տարբեր օրենքներ պարունակում են խտրականության դեմ հատվածային երաշխիքներ, սակայն դրանք չեն համապատասխանում մարդու իրավունքների միջազգային չափանիշներին: Հայաստանի կողմից, մարդու իրավունքների միջազգային պարտավորություններին համահունչ համապարփակ իրավահավասարության օրենսդրություն չընդունելը, ստիպում է շատ անհատների ապավինել խտրականությունից արգելքի դրույթների մասնատված մի շարքի, որոնք հավաքականորեն չեն ապահովում լիարժեք պաշտպանություն:

Հավասարության մասին օրենքի անհրաժեշտությունը բազմիցս ընդգծվել է վերջին տարիների Մարդու իրավունքների ազգային գործողությունների ծրագրերում, որոնցից վերջինն ընդունվել է 2023 թվականին: Արդարադատության նախարարությունը 2019

թվականի հուլիսի 15-ին հրապարակեց օրենքի նախագիծ, որն արժանացավ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների քննադատությանը: Նրանք մատնանշեցին դրա թերությունները, ներառյալ.

1. Խտրականության արգելված հիմքերի թերի ցուցակ, որոնք բաց են թողնում այնպիսի գործոններ, ինչպիսիք են առողջական վիճակը, սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը:
2. Խտրականության թույլ և թերի սահմանում, որը հստակորեն չի արգելում բազմակի և ինտերսեկցիոնալ խտրականությունը և համարժեք չի սահմանում «խելամիտ հարմարեցումները»:
3. Մահմանափակ կատարողական լիազորություններ և անբավարար ռեսուրսներ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի համար, որի ներքո, օրենքով, պետք է գործի հավասարության ազգային մարմինը:
4. Մասնավոր կառույցներին առնչվող գործերով՝ ոչ նյութական վնասների հատուցման դրույթների բացակայությունը:

Որպես առաջխաղացում պետք է նշել այն փաստը, որ 2020 թվականի հունվարին վարչապետի աշխատակազմ է ուղարկվել օրենքի լրամշակված նախագիծ, ինչպես նաև Քաղաքացիական դատավարության և վարչական դատավարության օրենսգրքերի փոփոխությունների փաթեթը: Այս փոփոխությունները ընդլայնեցին Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի լիազորությունները՝ մասնավոր կազմակերպությունների նկատմամբ խտրականության գործերը և ընդհանուր իրավասության դատարաններում խտրականության դեպքերը քննելու համար:

Այնուամենայնիվ, առաջընթացը լճացավ մինչև 2023 թվականի օգոստոսը, երբ Արդարադատության նախարարությունը վերսկսեց օրենքի մշակման շուրջ գործընթացը՝ դիմելով Եվրոպայի խորհրդին փորձագիտական վերլուծության համար: Այս որոշման արդյունավետությունը կասկածելի է, քանի որ նախորդ նախագծերն արդեն վերլուծվել էին միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ Equal Rights Trust-ի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից: Ավելին, Հայաստանի Խտրականության դեմ պայքարի և հանուն հավասարության կռաւիցիան մտահոգված է նախարարության ընտրությամբ՝ հիմք ընդունել և աշխատել 2019թ. օրենքի նախագծի շուրջ, այլ ոչ թե 2020թ. տարբերակը, որն արդեն իսկ փոփոխվել էր քաղաքացիական հասարակության մասնակցությամբ:

Հակախտրականության ոլորտի հետ ուղղակի կապվում են ատելության խոսքի դրսևորումներն և դրա հիմքով կատարված հանցագործությունները: 2021թ. Հայաստանում գրանցվել է ատելության հողի վրա հանցագործության 68 դեպք, այդ թվում՝ «բռնության հրապարակային կոչեր, բռնության հանրային արդարացում կամ քարոզչություն» 21 դեպք: Այնուամենայնիվ, հանցավոր բնույթի ատելության խոսքի դեպքերի և ատելության հիմքի վրա հանցագործությունների վերաբերյալ առկա տվյալները չեն ներկայացնում խնդրի իրական չափը՝ համապարփակ մոնիտորինգի և տվյալների հավաքագրման պատշաճ մեխանիզմի բացակայության պատճառով:

2022 թվականի հուլիսին Հայաստանում ուժի մեջ մտան նոր Քրեական և Քրեական դատավարության օրենսգրքերը, որոնք բացահայտորեն քրեականացնում են ատելության խոսքը: Ատելության խոսքը սահմանվում է որպես հրապարակայնորեն ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելը կամ քարոզելը, ինչպես նաև նման նպատակների համար նյութեր կամ իրեր տարածելը: Քրեական նոր օրենքն իր մեջ ներառում է նաև դրույթներ, որոնք առնչվում են ծանրացուցիչ հանգամանքներին, ինչպիսիք են հանցագործի կողմնակալ, ատելության դրդապատճառը: Այնուամենայնիվ, բաց են մնում են այն հարցերը, թե արդյոք

այս դրույթները համարժեք արձագանքում են ատելության խոսքի, ատելության հանցագործության և հանցավոր խտրականության բոլոր ձևերի արդյունավետ վերացմանը:

2022թ. մայիսին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ուղենիշային վճիռը ընդգծեց այն, որ Հայաստանը ձախողել էր դիմողին պաշտպանելը և հումֆոք բնույթի հանցագործության հետաքննություն իրականացնելը (Օգանեզովան ընդդեմ Հայաստանի): Ատելության հիմքով ԼԳՖՏԻ անձանց դեմ կատարված հանցագործությունների զոհերը, իրավապահ մարմինների հետ առնչվելիս, շարունակում են բախվել նույն տիպի վերաբերմունքին, իսկ այդ գործերը հաճախ կարճվում են կամ վերաորակվում են ավելի մեղմ մեղադրանքի: Հայաստանի օրենսդրության մեջ բացակայում է սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության ճանաչումը, որն իր հերթին գուգորդվում է իշխանությունների դժկամությամբ՝ ուղղված ատելության դրդապատճառներով բռնության դեպքերի դեմ: Այս ամենը ձևավորում է անպատժելիության մթնոլորտ և նպաստում է թշնամանքին ու բռնությանը ԼԳՖՏ անձանց և խոցելի համայնքների ու նրանց ներկայացուցիչների նկատմամբ: Սա նաև քայքայում է վստահությունը ԼԳՖՏ անձանց և իրավապահների միջև, ինչի հետևանքով զոհերը ձգտում են աջակցություն ստանալ ՀԿ-ներից և ոչ թե ոստիկանությունից:

Առաջարկություններ

Հայաստանը պետք է ընդունի իրավահավասարության մասին համապարփակ օրենսդրություն, որը կհամապատասխանի մարդու իրավունքների միջազգային չափանիշներին: Օրենքի մշակման ընթացքում իշխանությունները պետք է լայնածավալ խորհրդակցություններ անցկացնեն քաղաքացիական հասարակության հետ: Այս օրենսդրությունը պետք է.

- *Մշակել ատելության խոսքի դրսևորումները մշտադիտարկելու մեխանիզմ և մանրամասն ուղեցույց՝ ատելության խոսքի և ատելության հիմքով հանցագործությունների շուրջ տվյալների հետևողական և տարանջատված հավաքագրման համար:*
- *Իրականացնել իրավապահ մարմինների պաշտոնյաների, դատախազների և քրեական արդարադատության ոլորտի ներկայացուցիչների համապատասխան ուսուցում և տրամադրել հստակ ուղեցույցներ՝ ատելության հողի վրա կատարված հանցագործությունների վերաբերյալ:*
- *Վերանայել Քրեական օրենսգրքի դրույթները, որոնք վերաբերում են ատելության խոսքին, ծանրացնող հանգամանքներին և խտրականությանը, որպեսզի քրեական արդարադատության ներկայացուցիչներին հնարավորություն ընձեռվի արդյունավետորեն պայքարել ռասիստական և հակա-ԼԳՖՏ բնույթի հանցավոր ատելության խոսքի, ատելության հիմքով այլ հանցագործությունների և խտրականության դեմ:*
- *Արգելի միջազգայնորեն ճանաչված հիմքերի վրա հիմնված խտրականության բոլոր ձևերը՝ օրենքով կարգավորվող բոլոր ոլորտներում:*
- *Պարտադրի դրական գործողությունների միջոցառումներ էական անհավասարությունները վերացնելու համար:*
- *Սահմանի արդյունավետ կիրարկման համար անհրաժեշտ ընթացակարգեր:*
- *Ստեղծի անկախ հավասարության մարմին՝ էական լիազորություններով և ինստիտուցիոնալ երաշխիքներով՝ դրա կիրարկումն ապահովելու համար:*



ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՀՈՐՎԱԾ 91

Առողջապահությանն առնչվող համընդհանուր արժեքներին և սկզբունքներին համապատասխան և որպես կայուն զարգացման ու տնտեսական աճի նախապայման՝ Կողմերը պետք է զարգացնեն իրենց համագործակցությունը հանրային առողջապահության ոլորտում՝ դրա մակարդակը բարձրացնելու նպատակով:

ՀՈՐՎԱԾ 92

Համագործակցությունը պետք է անդրադառնա վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն ու դրանց նկատմամբ հսկողությանը, այդ թվում՝ առողջապահության վերաբերյալ տեղեկությունների փոխանակման միջոցով՝ «բոլոր տեսակի քաղաքականությունների դեպքում՝ առողջապահության սկզբունք» մոտեցման խթանմանը, միջազգային կազմակերպությունների, մասնավորապես՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության հետ համագործակցությանը, և առողջապահությանն առնչվող այնպիսի միջազգային համաձայնագրերի իրականացման խթանմանը, ինչպիսիք են Առողջապահության համաշխարհային կազմակերպության 2003 թվականի՝ Ծխախոտի դեմ պայքարի շրջանակային կոնվենցիան և Միջազգային առողջապահական կանոնակարգերը:

Վերլուծելով Հայաստանի առողջապահության ոլորտը և այդտեղ իրականացված աշխատանքները կարելի է առանձնացնել հետևյալ խնդիրները.

Քաղցկեղի դեմ պայքարին ուղղված միջոցառումների իրականացում

Լիազոր մարմինը մասամբ կատարել է միասնական հարթակ ստեղծելու պարտավորությունը: 2023թ.-ի

սեպտեմբեր ամսվա դրությամբ էլեկտրոնային առողջապահական համակարգի մեջ ներդրվել է քաղցկեղով ախտորոշված պացիենտների բազան, որը դեռևս ամբողջական չէ, քանի որ ներառում է

միայն վերջին երեք տարիների տվյալները: Բացի այդ ստեղծված հարթակը դեռևս ֆունկցիոնալ առումով չունի հաշվետվությունների մշակման և գեներացման հնարավորություն, ինչն էական նշանակություն ունի ոլորտի զարգացմանն ուղղված քայլերի տեսանկյունից, քանի որ հավաքագրված տվյալների հիման վրա կատարված հետազոտությունները կնպաստեն քաղցկեղի դեմ ուղղված պայքարի միջոցառումների իրականացմանը: Հարթակը նաև չի ներառում պացիենտների աջակցման ֆունկցիան, որը նախատեսված է ճանապարհային քարտեզով, որը գործնականում իրականացվում է ոլորտում եղած հասարակական կազմակերպությունների և միավորումների առցանց հարթակներում (cancer.am, Հենարան հիմնադրամի կայք և այլն): Իսկ հարթակում եղած սկրինինգների ռեգիստրը դեռևս միայն կրծքագեղձի քաղցկեղի մասով է (օրինակ՝ կոլոռեկտալ քաղցկեղի մասով դեռևս չկա):

Հարկ է նշել, որ դեռևս մշակված չեն քաղցկեղի բուժման նոր և առավել ընդգրկուն ալգորիթմների՝ Ուռուցքաբանների Եվրոպական ասոցիացիայի ուղեցույցներին համապատասխան, ինչպես նշված է ճանապարհային քարտեզում: Այս գործընթացի իրականացումը դանդաղում է, որը կապված է առողջության համապարփակ ապահովագրության ներդրման հետ: Ապահովագրության ներդրման կարևոր պայման է լինելու բոլոր բժշկական ծառայությունների մասով կլինիկական գործելակարգերի մշակումը և դրանց համատարած կիրառումը: Վերոնշյալ աշխատանքները բավականին ծավալուն են և դեռևս ոլորտային ասոցացիաների ու խորհրդատուների հետ քննարկման փուլում են:

Առաջարկություններ

- *Ապահովել թղթային հավաքագրված տվյալների ամբողջական մուտքագրումը բազա:*
- *Մշակել և ներդնել հաշվետվությունների գեներացման ֆունկցիան, այդ թվում նաև՝ օրենսդրությամբ սահմանված կարգով բուժաշխատողների կողմից տրամադրվող հաշվետվությունները:*
- *Մշակել, ադապտացնել և ներդնել Ուռուցքաբանների Եվրոպական ասոցիացիայի ուղեցույցներին համապատասխան քաղցկեղի բուժման նոր և առավել ընդգրկուն ալգորիթմներ:*
- *Ոլորտային հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ զարգացնել պացիենտակենտրոն աջակցման հարթակները:*

Քույրական գործի զարգացմանն ուղղված ծրագրի մշակում և ներդրում

Տվյալ գործողության իրականացմանն ուղղված աշխատանքները սկսվել են 2022 թվականին: «Բուժքույրական գործի զարգացման ռազմավարությունը և դրանից բխող 2022-2026 թթ-ի միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրամանը⁷ հաստատվել է և ներդրման ու կատարման մասով մշտադիտարկում իրականացնելու անհրաժեշտություն կա:

Առաջարկություններ

- *Իրականացնել մշտադիտարկում ռազմավարության և դրանից բխող գործառնությունների իրականացման մասով:*

ԱԱՊ բարեփոխումներ

Տվյալ գործողության համար սահմանված է 2021-2023թթ, սակայն 2023թ.-ի նոյեմբերի 27-ի դրությամբ դեռևս որևէ հստակ և տեսանելի բարեփոխում կատարված չէ, բացառության մի քանի պոլիկլինիկաների վերանորոգումների: Առողջության առաջնային պահպանման օղակի

⁷ <https://moh.am/uploads/470.pdf>

բարեփոխումները կարողացան նախապայման են նաև առողջության համընդհանուր ապահովագրության ներդրման համար, որի սկիզբը նախատեսվում է 2024 թ.-ին: Հարկ է նշել, որ այս գործողության առանձին մաս է կազմում ընտանեկան բժիշկների մանկաբույժների, դեռահասային բժիշկների և դպրոցական բուժքույրների պատրաստումը և շարունակական մասնագիտական զարգացման գործընթացի ապահովումը: Նշված դասընթացները լիազոր մարմինն իրականացնում է հիմնականում Առողջության ազգային ինստիտուտի կողմից առցանց տարբերակով, որի արդյունավետության հարցը խիստ կասկածելի է: Աշխատանքի և պացիենտներին ընդունելու հետ մեկտեղ բուժաշխատողները գրեթե չեն մասնակցում դասընթացներին և ստանում են համապատասխան կրեդիտներ, իսկ ստացված գիտելիքի ստուգման մեխանիզմներ չկան: ՀՀ ԱՆ-ի կողմից մարզային բժշկական հաստատությունները կադրերով ապահովման, այդ թվում՝ բուժաշխատողների սոցիալական աջակցության և խրախուսման մեխանիզմների վերաբերյալ միջոցառումների ցանկը հաստատելու մասին հրամանն ընդունվել է 2023թ.-ի սեպտեմբերի 19-ին, որի իրականացումը դեռևս կատարման փուլում է և չի բխում ի սկզբանե սահմանված ժամկետներից:

Առաջարկություններ

- *ԵՄ փորձագիտական ներուժի աջակցությամբ կազմակերպել մանրամասն կարիքների գնահատում ԱԱՊ զարգացմանն ուղղված:*
- *Հետաձգել առողջության համապարփակ ապահովագրության ամբողջական ներդրումը մինչև ԱԱՊ օղակի բարելավումը և դրա համապատասխանեցումն ապահովագրության համակարգին:*
- *ԱԱՊ օղակի բուժաշխատողների տեսական և գործնական գիտելիքների ստուգման մեխանիզմների ներդրում:*
- *Ապահովել ԱԱՊ օղակի բոլոր հաստատություններում ֆիզիկական մատչելիությունը պացիենտների բոլոր խմբերի համար:*

Պետական պատվերի ծառայությունների մասով հրազեկում

Լիազոր մարմինն այս գործառնություն իրականացման վերաբերյալ վկայակոչում է բժշկական հաստատություններում տեղեկատվական պաստառներ փակցնելն ու մի քանի տեսահոլովակ պատրաստելը, սակայն դարձյալ հարց է առաջանում, թե արդյոք դրանք հասանելի են հասարակության այն խմբերին, ովքեր ունեն մատչելի ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության կարիք: Բացի այդ պետք է նշել, որ ԱՆ-ի կողմից մշակված տեղեկատվական հոլովակներն ունեն չափազանց քիչ տեսանելիություն (յուրօրյան ալիքում մոտ 20 դիտում): Առավել արդյունավետ է, երբ բուժաշխատողը (կամ ընդունարանում պացիենտին դիմավորող աշխատակիցը) տեղում ճիշտ հաղորդակցման շրջանակներում ներկայացնում է հասանելի բոլոր ծառայությունները տվյալ պացիենտի համար: Էական է նաև այն, որ տեսալսողական խնդիրներ ունեցող պացիենտների համար յուրաքանչյուր դեպքում պետք է ապահովել համապատասխան եղանակով տեղեկատվության տրամադրումը:

Այս գործողության հետ կապված նոր մարտահրավերներ է առաջ բերում ապահովագրության ներդրումը, որը փաստորեն ամբողջովին փոխելու է նախկին պետական պատվերի մեխանիզմը, սակայն այս մասով տեղեկատվության և հանրային քննարկումների հարցը թերանում է: Բուժաշխատողների շրջանում հանդիպումների արդյունքում պարզ է դառնում, որ նույնիսկ իրենք բավարար տեղեկություններ չունեն, այն պարագայում, որ սպասվող փոփոխություններն անմիջականորեն կապված են իրենց առօրյա աշխատանքի և պացիենտներին տեղեկացնելու հետ:

Առաջարկություններ

- Մշակել տեղեկատվական արշավներ՝ ըստ թիրախավորված խմբերի, համապատասխանաբար կիրառել տվյալ խմբին հարմարեցված գործիքակազմ:
- Ձուգորդել դեռևս գործող պետական պատվերի եղանակով և փոփոխվող ապահովագրության համակարգով ծառայությունների մատուցման վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը:
- Իրականացնել պարբերական վերապատրաստում բուժաշխատողների հետ հաղորդակցության հմտությունների զարգացման թեմայով, ինչը կնպաստի բուժաշխատողի կողմից պացիենտին փոխանցվող առաջնային տեղեկատվության արդյունավետ տրամադրումը:
- Ապահովել տեղեկատվության տրամադրման մատչելի եղանակները հասարակության այն անդամներին, ովքեր ունեն տեսողական կամ լսողական խնդիրներ:

Հոգեբուժական ծառայությունների բարեփոխումների շրջանակում

Ծառայության հզորացմանն ուղղված միջոցառումներ

Հոգեբուժական ծառայությունների մասով լիազոր մարմինը հիմնական ռեսուրսները կենտրոնացրել է հաստատությունների վերանորոգման և նմանատիպ այլ շինարարական աշխատանքների կատարման ուղղությամբ: 2022-ին հաստատվեց «Հոգեկան առողջության պահպանման և բարելավման միջոցառումների ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրամանը⁸, որի մշտադիտարկման և գնահատման մասով ստեղծվեց նաև աշխատանքային խումբ:

Առաջարկություններ

- Կենտրոնացնել ռեսուրսները համայնքապետարաններում կամ այլ ապակենտրոնացված մոտեցումների ներդրման ուղղությամբ:
- Ապահովել մշտադիտարկման և գնահատման մասով ստեղծած աշխատանքային խմբի անարգել գործունեությունը:

Էլեկտրոնային առողջապահական համակարգ

Այս համակարգը ներդրվել է դեռևս 2017թ.-ին, սակայն մինչ օրս այն լիարժեք չէ և չի համապատասխանում հայեցակարգում կամ այլ փաստաթղթերում սահմանված իր նպատակներին: Համաձայնագրում անդրադարձ կա էլեկտրոնային առողջապահական համակարգի շրջանակներում հեռաբժշկության ներդրմանը: Կառավարությունը 2022թ.-ին հաստատեց հեռաբժշկության իրականացման կարգը և պայմանները, սակայն գործնականում դրանք կիրառություն չունեն: Որպես կանոն բուժաշխատողները հեռավար բժշկական ծառայությունները մատուցում են տարածված սոցիալական հարթակների հաղորդագրության հավելվածներով (մեսինջեր, վայբեր, whatsapp և այլն): Այս եղանակն ապահով չէ, ինչպես նաև որևէ կերպ վերահսկելի չէ: Էլեկտրոնային առողջապահական համակարգը նաև ունի govlimits հարթակը⁹, որը նախատեսված է ՀՀ տարածքում պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպություններում փաստացի կատարված աշխատանքները, մահճակալների զբաղվածությունը, առկա տեղերը և հերթագրումները թափանցիկ տեսանելի դարձնելու համար: Էական է, որ այն պետք է թարմացված լինի յուրաքանչյուր պահի, սակայն

⁸ <https://moh.am/uploads/2940hrh.pdf>

⁹ <https://www.armed.am/publicdata/?pg=govlimits>

օգտագործողների կողմից բազմիցս նշվում է, որ կայքում եղած տվյալները չեն համապատասխանում այդ պահին բժշկական հաստատության տրամադրած տեղեկությանը: Չնայած այն հանգամանքին, որ այս հարթակը ներդրել է դեռևս մի քանի տարի առաջ, մինչ օրս կայքում առկա է «գտնվում է փորձարկման փուլում» զգուշացումը (disclaimer):

Ինչ վերաբերում է էլեկտրոնային եղանակով ուղեգրի և դեղատոմսի դուրս գրման գործընթացին, ապա պետք է նշել, որ ուղեգրի դուրս գրման ֆունկցիան թերի է իրականացվում քանի որ տեխնիկական բացեր կան և պացիենտը երբեմն ստիպված է լինում արդեն իսկ հաստատված ստացիոնար բուժումից առաջ ևս մեկ անգամ այցելել պոլիկլինիկա և կարգավորել ուղեգրի հետ կապված խնդիրները: Իսկ դեղերի դուրս գրման ընթացակարգը երկու տարի առաջ պիլոտային փորձարկումից հետո որևէ կերպ չքննարկվեց ու չհրապարակվեց դրա արդյունքների մասին, իսկ 2023թ.-ի նոյեմբերի դրությամբ դեռևս դեղատոմսի էլեկտրոնային եղանակով դուրս գրումը հասանելի չէ: Այս գործընթացի արագացման համար նախ անհրաժեշտ է, որ ամբողջությամբ ներդրվի դեղերի ռեգիստրը, որի մասին լիազոր մարմինը նշում է, որ դեռևս ընթացքի մեջ են աշխատանքները «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն»-ի հետ: Ինչ վերաբերում է մատյանների էլեկտրոնային դարձնելու նշանակությանն ու կարևորությանը, ապա պետք է նշել, որ բուժհաստատությունների կողմից ներկայումս վարվում են տասնյակների հասնող գրանցամատյաններ, որոնք լրացվում են ձեռքով: Համակարգի ներդրումը պետք է նպաստեր փաստաթղթաշրջանառության կրճատմանը, բայց ներկայումս փաստաթղթերը լրացվում են և՛ թղթային, և՛ էլեկտրոնային եղանակով:

Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում տեղադրված է նախագիծ¹⁰ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու համար բժշկական կազմակերպություններ ուղեգրման կարգի վերաբերյալ: Համաձայն նշված նախագծի՝ 2023թ.-ի հոկտեմբերի 1-ից ուժի մեջ է մտնելու էլեկտրոնային եղանակով ուղեգրի դուրս գրման կարգը: Հարկ է նշել, որ հեռախոսային հավելվածով Արմեդ էլեկտրոնային միասնական համակարգից օգտվելիս կան տեխնիկական խնդիրներ, ինչը կարող է օգտատերերի համար խոչընդոտ հանդիսանալ գործընթացն իրականացնելիս: Մասնավորապես՝ նախքան հավելվածի ֆունկցիոնալ մասից օգտվելն անհրաժեշտ է անցնել անձի նույնականացում, որը ոչ միշտ է հաջողվում պացիենտի (օգտատիրոջ) մոտ: Դեմքի փոփոխության, վնասվածքի և այլ խնդիրների պատճառով մարդու անձը հաստատող փաստաթղթի (համակարգում եղած նկարի) և այդ պահին եղած ֆիզիոլոգիական տեսքի հետ համընկնում չի լինում: Նույնականացման այսպիսի խնդիրների վերաբերյալ ուղղված բազմաթիվ հարցերին ի պատասխան՝ Արմեդի ներկայացուցիչը խորհուրդ էր տալիս օգտագործել նոր սերնդի սմարթֆոն, ինչն ուղղակի անընդունելի ու անհասկանալի է: Նույնականացման տարբեր եղանակներ պետք է հասանելի լինեն, նաև հաշվի առնելով այն, որ ոչ բոլորն ունեն սմարթֆոններ կամ ոչ բոլորը կարող են այն օգտագործել:

Առաջարկություններ

- *Իրականացնել պարբերական քննարկումներ համակարգն անմիջականորեն օգտագործող բուժաշխատողների հետ՝ պարզաբանելու գործնականում առաջացած խնդիրները, դժվարությունները և (կամ) նոր ֆունկցիաների ներդրման անհրաժեշտությունը:*
- *Ապահովել ամենօրյա թարմացման ռեժիմով govlimits հարթակում առկա տվյալները:*
- *Հաշվի առնելով մարդու հնարավոր ֆիզիոլոգիական փոփոխությունները՝ ապահովել բացի դեմքով նույնականացման եղանակից նաև այլ տարբերակներ:*

¹⁰ <https://www.e-draft.am/projects/6241/about>

- Վերանայել և կարգավորել էլեկտրոնային ուղեգրման գործընթացում եղած տեխնիկական խնդիրները:
- Ապահովել բուժաշխատողների կողմից միննույն տվյալի հավաքագրման միայն մեկ եղանակով մշակման հնարավորությունը:
- Իրազեկել էլեկտրոնային համակարգի կիրառման մասին հասարակության լայն շերտերին:
- Ապահովել դեղերի ռեգիստրի դերդնումը:
- Իրականացնել պատշաճ գնահատում էլեկտրոնային եղանակով դեղատոմսերի դուրսգրման պիլոտային ծրագրի, վերջինիս հիման վրա ապահովել ողջ գործընթացը ներդնումը:

Հանրային առողջապահություն

Համաձայնագրում մի քանի կետով անդրադարձ կա այս ոլորտի տարբեր բաղադրիչների վերաբերյալ, որոնցից կատարվել են միայն մի քանիսը՝ հակաժխախտային իրավական ակտերի ընդունումը, առողջ ապրելակերպի վերաբերյալ մի քանի հանդիպում-քննարկումների և քարոզարշավի նախագծումը: Առաջնային և կարևոր հարց է հենց հանրային առողջապահության մասին օրենքի ընդունումը, որը հնարավորինս համապարփակ կերպով կկարգավորի վերջինիս բոլոր բաղադրիչները: Դեռևս 2021թ.-ին շրջանառության մեջ դրվեց հանրային առողջապահության մասին օրենքի մի նախագիծ, որն այդպես էլ չընդունվեց, թեպետ այն առավելապես վերաբերում էր պատվաստումների կիրառմանը՝ որպես հիվանդությունների կանխարգելում:

Հանրային առողջության իմաստով օրենսդրական մեծ բաց է նաև այն, որ դեռևս մշակված չեն հանքերի շահագործման արդյունքում հասարակության (ազդակիր համայնքի) առողջության վրա թողած ազդեցության գնահատման մեխանիզմները:

Առաջարկություններ

- *Ապահովել հանրային առողջապահության մասին օրենքի մշակման, հանրային քննարկման և ընդունման գործընթացը:*
- *Ընդունել իրավական կարգավորումներ հանքերի շահագործման արդյունքում առողջությանը հասված վնասի գնահատման վերաբերյալ:*
- *Լիազոր մարմնի առողջ ապրելակերպին ուղղված արշավներում ապահովել համալիր մոտեցումների ներդնումը՝ սննդային, ֆիզիկական ակտիվության, շրջակա միջավայրի և այլ բաղադրիչների ներառմամբ:*

Պալլիատիվ օգնություն

Երկար տարիների ջանքերի արդյունքում ՀՀ-ում ներդրվեց պալլիատիվ օգնությունը և լիցենզավորվեցին մի շարք կազմակերպություններ: 2023թ.-ի հոկտեմբերի դրությամբ լիցենզավորված 33 ծառայություններից ընդամենը 17 են պետական պատվերի շրջանակներում ծառայություններ մատուցում, ընդ որում որոշ տեղերում գրեթե չեն սպասվեն ողջ տարվա համար նախատեսված ֆինանսական միջոցները, ինչը մտահոգության տեղիք է տալիս: Երկու մեծ մարզերում՝ Շիրակ և Լոռի, առհասարակ չկան ծառայությունները: Դրական առաջխաղացում է 2022թ.-ին մանկական պալլիատիվ ծառայության հայեցակարգի ընդունը և հենց ծառայության ներդնումը:



Շարունակական խոչընդոտ է ցավագրկողների նշանակումը, որը չի կարգավորվում՝ հաշվի առնելով բուժաշխատողների մոտեցումները, պացիենտների մոտ տեղեկատվության բացի պատճառով պահանջի ձևավորումը և այլն:

Առաջարկություններ

- *Այն բժշկական հաստատություններում, որտեղ չեն օգտագործվել պետական պատվերով սահմանված ռեսուրսները պալլիատիվ օգնության համար իրականացնել ուսումնասիրություններ պարզելու դրանց պատճառները:*
- *Ապահովել ցավագրկողների նշանակման և պացիենտի ստացման անարգել գործընթացը հանրապետության ողջ տարածքում:*

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ
ԽՆԴԻՐԸ
ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈԼՈՐՏՈՒՄ**

ՀՈԴՎԱԾ 93

Համագործակցությունն ու քաղաքական երկխոսությունն ակտիվացնելու համար Կողմերը պետք է փոխգործակցեն կրթության և վերապատրաստման ոլորտում՝ Հայաստանի Հանրապետության կրթության և վերապատրաստման համակարգերը Եվրոպական միության քաղաքականություններին ու գործելակերպերին մոտարկելու նպատակով: Կողմերը պետք է համագործակցեն ամբողջ կյանքի ընթացքում կրթությունը խթանելու հարցում, ինչպես նաև խրախուսեն կրթության և վերապատրաստման բոլոր մակարդակներում համագործակցությունն ու թափանցիկությունը՝

հատուկ ուշադրության կենտրոնում պահելով մասնագիտական և բարձրագույն կրթությունը:

ՀՈՂՎԱԾ 94

Կրթության և վերապատրաստման ոլորտում համագործակցությունը պետք է կենտրոնացած լինի, *inter alia*, հետևյալ ոլորտների վրա՝ (a) մշտական կրթության խթանում, ինչն աճի և աշխատատեղեր ստեղծելու բանալին է, և քաղաքացիներին կարող է ընձեռել հասարակության մեջ լիարժեք կերպով ներգրավվելու հնարավորություն,

(b) կրթության և վերապատրաստման համակարգերի, այդ թվում՝ հանրային/քաղաքացիական ծառայողների վերապատրաստման համակարգերի արդիականացում, ինչպես նաև որակի, վերաբերելիության և հասանելիության մակարդակի բարձրացում կրթության բոլոր աստիճաններում՝ վաղ մանկական կրթությունից ու խնամքից մինչև միջնակարգ և բարձրագույն կրթություն, (c) բարձրագույն կրթության ոլորտում համապատասխանեցման և համակարգված բարեփոխումների գործընթացի խթանում, ինչը բխում է Եվրոպական միության՝ Բարձրագույն կրթության օրակարգից և Եվրոպական Բարձրագույն կրթության տարածքից (Բոլոնիայի գործընթաց),

(d) միջազգային գիտական համագործակցության ամրապնդում, Եվրոպական միության համագործակցության ծրագրերին մասնակցության ընդլայնում, ինչպես նաև ուսանողների և ուսուցիչների շարժունակության բարելավում, (e) խրախուսում օտար լեզուներ սովորելը, (f) ազգային որակավորումների շրջանակի մշակում՝ Եվրոպական

որակավորումների շրջանակին միացած Տեղեկատվական կենտրոնների Եվրոպական ցանցի և Ազգային ակադեմիական ճանաչման տեղեկատվական կենտրոնների (ՏԿԵՅ-ԱԱՃՏԿ) համայնքի շրջանակներում որակավորումների և մասնագիտացման ճանաչումն ու թափանցիկությունը բարելավելու նպատակով, (g) մասնագիտական կրթության և վերապատրաստման հետագա զարգացման նպատակով համագործակցության ընդլայնում՝ հաշվի առնելով Եվրոպական միությունում պատշաճ գործելակերպը, և (h) Եվրոպական ինտեգրման գործընթացի ընկալում և դրա վերաբերյալ իրազեկության ամրապնդում, ԵՄ-Արևելյան գործընկերություն հարաբերությունների մասին գիտական երկխոսություն և Եվրոպական միության համապատասխան ծրագրերին մասնակցություն, այդ թվում՝ քաղաքացիական ծառայության ոլորտում:

ՀՈՂՎԱԾ 95

Կողմերը համաձայնում են փոխգործակցել երիտասարդությանն առնչվող հարցերում՝ նպատակ ունենալով՝ (a) ամրապնդելու երիտասարդությանն առնչվող քաղաքականության և երիտասարդների ու երիտասարդ աշխատողների համար ոչ ֆորմալ կրթության ոլորտում համագործակցությունն ու

փոխանակումները, (b) դյուրացնելու հասարակական կյանքում բոլոր երիտասարդների ակտիվ մասնակցությունը, (c) աջակցելու երիտասարդների և երիտասարդ աշխատողների շարժունակությանը՝ որպես ֆորմալ կրթական համակարգերից դուրս միջմշակութային երկխոսությունը խթանելու և գիտելիք, հմտություններ ու մասնագիտացում ձեռք բերելու միջոց, այդ թվում՝ նաև կամավոր գործունեության միջոցով, և (d) քաղաքացիական հասարակությանն աջակցելու նպատակով խթանելու երիտասարդական կազմակերպությունների միջև համագործակցությունը:

Վերջին տասնամյակների ընթացքում, ինչպես 2018 թվականի Թավշյա հեղափոխությունից առաջ, այնպես էլ հետո համակարգային ձևով խաթարվել է կրթության հավասարությունը և որակյալ կրթության իրավունքը: Համակարգի այսպիսի տևական խարխուլումը հանգեցնել է կրթական աղքատության աննախադեպ աճի: Այսպես, Համաշխարհային բանկի 2019 թվականի զեկույցներից մեկի համաձայն, 10 տարեկան երեխաների 35 տոկոսը չի կարողանում կարդալ և ըմբռնել իր տարիքին համապատասխան կարճ տեքստը, իսկ 19-21 տարեկան երիտասարդների 10%-ը ֆուկցիոնալ անգրագիտություն ունի: Միննույն ժամանակ պաշտոնական վիճակագրական տվյալների վրա հիմնված ուսումնասիրությունները և 2015 թվականի TIMMS ստուգատեսի (Trends in International Mathematics Science Study - Մաթեմատիկայի եւ բնագիտության միջազգային միտումների ուսումնասիրություն) արդյունքները փաստում են, որ շատ երեխաների հասանելի չէ որակյալ կրթությունը, ինչը պայմանավորված է նրանց սոցիալական, կացության կարգավիճակով եւ սեռով:

Այս իրավիճակի առաջնային պատճառը համակարգային կոռուպցիան է, որով մինչև հեղափոխությունը ներծծված էր ամբողջ համակարգը, երբ այն վերահսկվում էր գործադիր մարմնի կողմից՝ քաղաքական ու ֆինանսական շահ ստանալու համար: Հեղափոխությունից հետո կառավարությունը ձախողեց համակարգային խնդիրների լուծման եւ բարեվարքության վերականգնման քայլեր ձեռնարկելը, ինչպես նաև արդյունավետ կառավարման երաշխիքներ ստեղծելը: Այսպիսով, հաշվետվականության պակասը, անկախ եւ արդյունավետ գնահատման մեխանիզմների բացակայությունը, ինչպես նաև ուսուցիչների կողմից իրենց աշակերտներին մասնավոր կրկնուսուցում տրամադրելու չնվազող մակարդակը, կրթական ձեռքբերումների իրականից ավել գնահատումը է՛լ ավելի են սրում կրթական աղքատությունը և խարխուլում այդ ոլորտում հավասարությունը:

Նման համակարգի նկատմամբ քաղաքական վերահսկողությունը նպաստել են մեծածավալ վարչական չարաշահումների և ֆինանսական յուրացումների: 2013 թվականին Կրթության համաշխարհային բարոմետրի զեկույցում Հայաստանում կրթությունն ամենակոռումպացված ոլորտն է ճանաչվել: Սակայն հիմնախնդրի գլխավոր պատճառներին անդրադառնալու փոխարեն կառավարությունը նախընտրեց քողարկել այն՝ բարեփոխումն ուղղորդելով դեպի «էլիտար կրթություն», ինչի արդյունքում խոցելի և մարգինալացված ընտանիքների համար որակյալ կրթությունը շարունակեց անհասանելի մնալ:

Ոլորտի հակակոռուպցիոն ռազմավարությունը, որը ձեռնարկեց ՀՀ կառավարությունը և որի համար ֆինանսավորում ստացավ, չհասցեագրեց կոռուպցիոն 4 հիմնական ռիսկերից եւ ոչ մեկը, ինչպես նաև անհավասարության խթանները: Դրանք առանձնացվել և ուսումնասիրվել են, ինչպես նաև առաջարկվել են դրանց մեղմմանն ուղղված գործողությունների շարք:

Դրանք մինչև այժմ, կամ դրանցից առնվազն երկուսը, շարունակում են չլուծված մնալ: Ավելին, նոր իշխանությունների կողմից բարեփոխման շրջանակում նախաձեռնված միջոցառումները ավելի շատ միտված են այդ խնդիրները թաքցնելուն, քան լուծմանը: Այս հիմնախնդիրներից/սպառնալիքներից

յուրաքանչյուրը նպաստում է կրթական աղքատությանը և, հընթացս, շարունակում են խաթարել հավասարությունը:

Առաջինը՝ մասնավոր կրկնուսուցումն է: Այն, որպես այդպիսին, հիմնախնդիր չէ, այն ընդունված է և գործում է բազմաթիվ երկրներում, որն առանձին ուսումնասիրությունների համաձայն, անգամ համարվում է, որ ունի որոշակի առավելություններ: Այսուհանդերձ, երբ այն իրականացվում է սեփական ուսուցիչներով կամ ուղղորդելով սեփական ուսուցիչներին կամ միևնույն հաստատության ուսուցիչների կողմից, դա սպառնալիք է:

Հայաստանում սա գրոտեսկային հատկանիշներ է ստացել. թերուսուցանում, այսինքն մասնավոր կրկնուսուցման բառացի հայցում: Այսպիսով, ուսուցման որակն ընկած է և մասնավոր կրկնուսուցման հնարավորություն չունեցողները գրկված են որակյալ կրթությունից, երկրորդ, գնահատման անաչառությունը, որը կրթության կարևոր գործիքներից է, ևս վտանգված է, և երրորդ՝ շահերի ակնհայտ բախում, որը ակնհայտ կոռուպցիա է:

Նախկինում սա տեղի էր ունենում միայն միջին դպրոցի բարձր դասարաններում եւ ավագ դպրոցում: Այժմ սա սովորական երևույթ է դարձել անգամ տարրական դպրոցում: Այսինքն, անգամ ցածր դասարանների աշակերտներն են դասարանում որակյալ կրթություն ստանալուց գրկված:

Գոյություն չեն ունեցել և դեռևս չկան նման գործելակերպերի բացահայտման և կանխարգելման մեխանիզմներ: Այս գործելակերպերը չեն արգելվում նաև օրենքով և/կամ որևէ պատասխանատվություն չի առաջանում նման արատավոր արարքի համար: Տեսչական մարմինը մեկ ստուգայց է կատարում, սովորաբար ֆորմալ, և դիտարկում դպրոցի փաստաթղթերը և հաշվետվությունները:

Երկրորդը՝ դպրոցական համակարգի քաղաքականացումն է: Այս խնդիրն անցյալում շատ ավելի մեծ էր, քանի որ վարչական ռեսուրսների չարաշահումը, մասնավորապես ընտրությունների ժամանակ, անսանձելի էր: Սա այն հիմնախնդիրներից մեկն էր, որի դեմ նոր իշխանությունները, նույնիսկ մինչև իշխանության գալը ձգտում էին պայքարել: Սակայն դա չափազանց նեղ իմաստով է հասկացվում, որպես ընդամենը անդամակցություն այն քաղաքական ուժին, որը ներկայացնում է կրթության ոլորտի ղեկավարը: Միևնույն ժամանակ, մի երկրում, որտեղ գործադիր մարմինը և իշխող կուսակցությունը նույնացված են, գործադրի հսկողությունը դպրոցի վրա վերջինիս դարձնում է ենթակա կառույց՝ հաշվետվողականության իսպառ բացակայությամբ. դպրոցի վրա իշխանություն ունեցողն այն նույն մարմինն է, որին վերջինս հաշվետու է: Բրգաձեւ կառավարումը շարունակվում է: Ուղիները, որով մարզպետարանները և տեղական ինքնակառավարման մարմիններն անհարկի ճնշում/թելադրանք են բանեցնում դպրոցների վրա, բացահայտված և արգելված չեն ո՛չ օրենսդրորեն, ո՛չ էլ գործնականում:

Երրորդը՝ դպրոցի աշխատակազմին աշխատանքի նշանակման և հեռացման ընթացակարգային չարաշահումն է: Այստեղ պետք է նշել, որ օրենսդրորեն ոչինչ չի փոխվել, տեսչական մարմինների կամ արհմիությունների առումով, և, որևէ էական փոփոխություն տեղի չի ունեցել:

Սակայն **չորրորդ** խնդիրն ամենաարդիականը և համակարգայինն է՝ համեմատած կրթական աղքատության և անարդարության հետ: Իրականում այն խթանում է աղքատությունը կրթությունում եւ քողարկում անարդարությունը:

Սա կրթության ոլորտում ձեռքներումների իրականությանը չհամապատասխանող գնահատումն է՝ կեղծ գնահատում: Դա ակնհայտ է և անհերքելի. տարրական կրթության ֆունկցիոնալ անգրագետ շրջանավարտների 35 տոկոսն ինչպես առանձին, այնպես էլ հավաքական առումով այս լայնածավալ խախտման ապացույցն են: Հետագոտությունն ի ցույց է դնում սրա առավել խորաթաքույց խթանները,

որոնցից մեկն, ինչպես վերը նշեցին, մասնավոր կրկնուսուցումն է, իսկ մյուսները ներառում են ծնողների ճնշումները գնահատականի համար, երեխայի բացակայության պարագայում գնահատական նժանակելը և այլն: Այստեղ առանցքային է այն, որ նոր կառավարության սահմանած միջոցառումները, մասնավորապես տարրական դպրոցում գնահատականների վերացումն ԱՌԱՆՅ պատշաճ գնահատման այլընտրանքային մեխանիզմների ներդրման եւ ուսուցիչների համար այդ այլընտրանքային մեխանիզմների կիրառման կարողությունների ձևավորման, պարզապես վերացնում է աշակերտների առաջադիմության իրական հետազման, անցած ճանապարհի ցանկացած հնարավորություն: Մի երկրում, որտեղ գնահատումն ամփոփիչ է, ապա այդ միակ գործիքից ազատվելը հավասար է ինքնասպանության՝ կրթության ոլորտում ցուցաբերվող ցանկացած մոտեցման առումով:

Մեկ այլ համակարգային հարց. դպրոցում կրթական գործընթացի մասին իրական ժամանակում տեղեկություններ ստանալու որևէ մեխանիզմ չկա: Ժամանակավոր և հազվադեպ ստուգումները չեն կարող բացահայտել համակարգային մեթոդաբանական խնդիրները, թեկուզ միայն այն պատճառով, որ դրանք՝ վերլուծելու և հետևություններ անելու, առավել ևս արձագանքելու համար բավարար տեղեկություններ և տվյալներ չեն հաղորդում:

Առաջարկություններ

- *Գնահատել և հայտնաբերել այն սովորողներին, որոնք իրենց մակարդակին համապատասխան նվազագույն մաթեմատիկական և լեզվական հմտությունների չեն տիրապետում: Մշակել և իրականացնել անհապաղ միջոցներ՝ շտկելու գրագիտության բացը բոլոր մակարդակներում՝ սահմանելով ուսումնական վերջնարդյունքների նվազագույն չափորոշիչ և իրականացնել ինտենսիվ լրացուցիչ ուսուցում:*
- *Սահմանել գնահատման հաշվետու մեխանիզմ, որն իրական ժամանակում տեղեկություն է հաղորդում դպրոցի և սովորողի կարգավիճակի մասին: Նախագծել և որդեգրել միջոցներ՝ գնահատման արդյունքում բացահայտված կարիքների/հիմնախնդիրների դեպքում համապատասխան հետադարձ կապի և հետագա գործողությունների մշակման համար: Ուսուցիչներին գնահատման հմտություններ սովորեցնել: Սահմանել պատշաճ ժամկետներում անկախ ստուգումների իրականացման մեխանիզմ՝ նաև բարելավարքության հետ կապված խնդիրների բացահայտման նպատակով:*
- *Օրենսդրորեն արգելք սահմանել սեփական և միևնույն դպրոցի աշակերտների կրկնուսուցման նկատմամբ: Սահմանել ստուգումների մեխանիզմ և այդ պրակտիկան շարունակող ուսուցիչների համար պատշաճ պատժամիջոցներ:*



ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴԱՐ և ԲԱՐԵՆՊԱՍՏ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔ

ՀՈՂՎԱԾ 84

Կողմերը պետք է ամրապնդեն իրենց երկխոսությունը և համագործակցությունը՝ ուղղված Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) «Արժանապատիվ աշխատանք» ծրագիրը, զբաղվածության քաղաքականությունը, աշխատավայրում առողջությունը և անվտանգությունը, սոցիալական երկխոսությունը, սոցիալական պաշտպանությունը, սոցիալական ներգրավվածությունը, կանանց և տղամարդկանց հավասարությունը և խտրականության բացառումը խթանելուն՝ դրանով նպաստելով ավելի շատ և ավելի լավ աշխատատեղերի ստեղծմանը, աղքատության կրճատմանը, սոցիալական համերաշխության ընդլայնմանը, կայուն զարգացմանը և կյանքի որակի բարելավմանը:

ՀՈՂՎԱԾ 85

Տեղեկությունների և լավագույն գործելակերպի փոխանակման վրա հիմնված համագործակցությունը կարող է ընդգրկել հետևյալ ոլորտներում հասցեագրման

ենթակա որոշակի թվով հարցեր՝ (a) աղքատության կրճատում և սոցիալական համերաշխության ընդլայնում, (b) զբաղվածության քաղաքականություն՝ ուղղված արժանապատիվ աշխատանքային պայմաններով ավելի շատ և ավելի լավ աշխատատեղեր ստեղծելուն՝ այդ թվում՝ սովերային տնտեսության և սովերային

զբաղվածության մակարդակը նվազեցնելու նպատակով,

(c) աշխատաշուկային ուղղված ակտիվ միջոցառումների և զբաղվածության արդյունավետ ծառայությունների խթանում՝ աշխատաշուկաներն արդիականացնելու և աշխատաշուկայի կարիքներին

համապատասխանությունն ապահովելու համար, (d) առավել ընդգրկուն աշխատաշուկաների և սոցիալական ապահովության այնպիսի համակարգերի խթանում, որոնցում ներառված են անապահով անձինք, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք և փոքրամասնությունների խմբերը ներկայացնող անձինք, (e) հավասար հնարավորություններ և ոչ խտրական վերաբերմունք՝ ուղղված կանանց և տղամարդկանց միջև հավասար հնարավորությունների ապահովմանը և կանանց և տղամարդկանց միջև հավասարության ընդլայնմանը, ինչպես նաև՝ սեռի, ռասայական կամ էթնիկ ծագման, կրոնի կամ դավանանքի, հաշմանդամության, տարիքի կամ սեռական կողմնորոշման հիմքով խտրականության դեմ պայքարին, (f) սոցիալական քաղաքականություն՝ ուղղված սոցիալական պաշտպանության մակարդակի բարձրացմանը և սոցիալական պաշտպանության համակարգերի արդիականացմանը՝ որակի, հասանելիության և ֆինանսական կայունության առումով, (g) սոցիալական գործընկերների մասնակցության ընդլայնում և սոցիալական երկխոսության խթանում, այդ թվում՝ համապատասխան բոլոր շահագրգիռ կողմերի հնարավորություններն ամրապնդելու միջոցով, (h) աշխատավայրում առողջության և անվտանգության խթանում, և (i) կորպորատիվ սոցիալական պատասխանատվության խթանում:

Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին

1. 2021 թվականի հունիսից, որպես դրական զարգացում, Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը (Տեսչություն) ստանձնեց աշխատանքային օրենսդրության նկատմամբ պետական վերահսկողության լիազորությունը, որը ոլորտի մեծագույն խնդիրներից էր: Մա հնարավորություն տվեց աշխատանքային իրավունքի անհատական վեճեր քննել և այդ իրավունքի ոստահարման մեղադրանքների կապակցությամբ ստուգումներ կատարել:
2. Պաշտոնական վիճակագրությունը ցույց է տալիս, որ էթե 2021 թվականի երկրորդ կեսին Տեսչությունը հիմնականում անհատական բողոքների է արձագանքել, ապա 2022 թվականին այն, իր իսկ նախաձեռնությամբ, ակտիվորեն տարբեր ռիսկային գործատուների ստուգումներ է իրականացնում՝ ի լրումն առանձին բողոքներին արձագանքմանը:
3. Այնուամենայնիվ, Տեսչության արդյունավետությունը մեծացնելու համար դեռևս հետագա բարելավումների կարիք կա, ինչը կապահովի աշխատանքային իրավունքների հանդեպ ավելի մեծ հարգանք և կկանխի այդ իրավունքների հետագա խախտումները: Պետք է հստակեցվի նաև Տեսչության գործառնությունները սահմանող օրենսդրությունը: Մասնավորապես, պատասխանատվության ենթարկելու լիազորությունները պետք է ամրագրվեն օրենքում, այլ ոչ թե պարզապես կանոնադրության մեջ: Օրենքը պետք է պարզորոշ սահմանի Տեսչության ակտերի տեսակները, ինչպես նաև խախտումների բացահայտման մեթոդաբանությունը (ներառյալ ստուգումների, ուսումնասիրության և այլն):
4. Չնայած Տեսչությանը վերապահված է ԱՄԿ թիվ 81 Կոնվենցիայով սահմանված լիազորությունների մեծ մասը, ներպետական օրենսդրությունը Տեսչությանը ցանկացած ժամանակ, այդ թվում գիշերային ժամերին, ցանկացած ձեռնարկություն ստուգայց կատարելու իրավասություն չի տալիս: Այն պետք է գործատուին նախապես տեղեկացնի այցի մասին: Ավելին, ստուգման ընթացքում հայտնաբերված այլ խնդիրների ուսումնասիրման համար պետք է վերադասի կողմից լրացուցիչ հանձնարարություն տրվի:
5. Տեսչությունը պարտավոր է բարձրացնել ինչպես գործատուների, այնպես էլ աշխատողների իրազեկվածության մակարդակը: «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ի (ԻՊԱՍ)¹¹ իրականացրած փորձնական մշտադիտարկման արդյունքները վկայում են այն մասին,

¹¹ ԻՊԱՍ, Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի գործունեության առանձնահատկությունները և խնդիրները աշխատանքային իրավունքի ոլորտում, ապրիլ 2023, <https://prwb.am/2023/04/06/zekuyec-6/>, անգլերեն ամփոփագիրը հասանելի է սույն հղումով:

որ խնդիրների մեծ մասը, որոնք դատարան են ներկայացվել, կարող էին լուծվել ավելի վաղ փուլում, եթե գործատուն օրինական պահանջներին ավելի լավ տեղեկացված լիներ: Ձեռաթղթերի կամ ուղեցույցների մշակումը թույլ կտար նման դեպքում դատական վեճերից խուսափել: Չափազանց կարեւոր է հանրության լայն շրջանակների համար աշխատանքային իրավունքների, ինչպես նաև Տեսչության եւ իր մանդատի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացումը, հատկապես Հայաստանի մարզերում:

6. ԻՊԱՍ-ի վերլուծությունը վեր է հանել, որ աշխատողները ոտնահարված իրավունքներից հիմնականում բողոքում են աշխատանքից ազատվելուց հետո, այլ ոչ թե աշխատելու ընթացքում, թերեւս վախենալով հետեւանքներից: Տեսչությանը ներկայացված բողոքների վերլուծությունը նույն եզրակացություններին է հանգեցնում: Չօգտագործված արձակուրդի համար հատուցման չվճարելը, ընթացակարգի խախտմամբ աշխատանքից ազատելը, ազատման հրամանների կամ կարգապահական տույժի նշանակման անբավարար հիմնավորումը, աշխատանքից ազատման ընթացակարգի մասին ծանուցման անճշտությունները, աշխատանքային պայմանագրերի բացակայությունը կամ ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքումն՝ աշխատանքային պայմանագրերի փոխարեն, որպեսզի խուսափեն աշխատանքային իրավունքի երաշխիքների տրամադրումից, եւ այլն: Ավելին, աշխատողների կողմից Տեսչությանը ներկայացված բողոքների ճնշող մեծամասնությունը մասնավոր հատվածի եւ պետական հատվածի գործատուներին է վերաբերում: Անհատներից ստացված բողոքների շուրջ 40%-ը կապված էր գործատուի կողմից վերջնահաշվարկ չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետ: Բողոք ներկայացնողների մեծամասնությունը (56%) եղել են իգական սեռի ներկայացուցիչներ:
7. Չնայած Տեսչությանն անանուն բողոքների ներկայացման հարթակ տրամադրելու մասին ՀՀ կառավարության հայտարարած հանձնառությանը, առ այսօր այն չի գործում: Գործող օրենսդրության համաձայն՝ խախտման մասին ստացված բողոքին արձագանքելու համար Տեսչությանը պետք է անձնական տվյալ պարունակող բողոք ստանա: Պաշտոնական վիճակագրության համաձայն, աշխատողները մինչեւ աշխատանքից դուրս գալը սովորաբար իրենց գործատուի դեմ պաշտոնական բողոք չեն ներկայացնում: Այսպիսով, անանունության մեխանիզմի պակասը խաթարում է աշխատանքային իրավունքի խախտումների ժամանակին հասցեագրման եւ աշխատանքային պայմանների բարելավման ջանքերը:
8. Անօրինական զբաղվածությունը շարունակում է մնալ մտահոգության առարկա: Նման դեպքերում աշխատողները զրկվում են իրենց իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցներից, քանի որ չեն կարող ապացուցել աշխատանքային հարաբերությունները, եթե չունեն աշխատանքային պայմանագրի օրինակը եւ/կամ գրանցված չեն հարկային մարմնում: Հարկային մարմնում գրանցման մասին ծանուցման մեխանիզմը կարող էր նպաստել աշխատողի համար գործընթացի թափանցիկությանը:
9. Դատարանում քննվող վեճերի դիտարկումները բավարարված գործերի մասով ցույց են տալիս, որ պետական հաստատություններում առկա է հաստիքների արհեստական կրճատման հիմքով ազատման պրակտիկա (բաժինների/վարչությունների արհեստական վերակազմակերպում): Կամ, պետական պաշտոնյաներին եւ քաղաքացիական ծառայողներին աշխատանքից ազատման պահանջների չկատարումը (կատարողականի գնահատման բացակայություն, այլ աշխատանք

չառաջարկել եւ այլն), կարգապահական վարույթի չարաշահումը որպէս աշխատանքի ազատման հիմք¹²:

Արդարադատության հասանելիություն

10. Դրական փաստ է այն, որ Քաղաքացիական դատավարության օրենսգիրքն առանձին աշխատանքային վեճերի քննման եւ լուծման եռամսյա ժամկետ է սահմանում: Մակայն վարչական դատարանում աշխատանքային վեճերի վերաբերյալ սահմանված չէ նման ընթացակարգ: ԻՊԱՍ-ի մշտադիտարկումը ցույց է տալիս, որ դեպքերի մեծամասնությունում դատարաններն օրինական ժամկետները չեն պահպանում:¹³
11. Դրական է նաեւ այն, որ «Պետական տուրքի մասին» օրենքով աշխատանքային վեճերի վերաբերյալ հայց ներկայացնող հայցվորները (աշխատողները) ազատվում են պետական տուրքի վճարումից: Այսուհանդերձ, ԻՊԱՍ-ի մշտադիտարկումը ցույց է տալիս, որ դատարանը պետական տուրքի գանձման հարցում միանման մոտեցում չի ցուցաբերել եւ աշխատանքային որոշ վեճերի համար հայց ներկայացնելու համար պետական տուրք է գանձել:¹⁴

Աշխատանքային իրավունքների պաշտպանություն, Աշխատանքային օրենսգրքի փոփոխություններ

12. Մեկ այլ դրական զարգացում կարող ենք համարել 2023 թվականի մայիսի 3-ին Ազգային ժողովի կողմից ընդունված Աշխատանքային օրենսգրքում փոփոխությունների նախագծի մշակման գործընթացում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների եւ այլ շահագրգիռ կողմերի արդյունավետ մասնակցության ապահովումը: Արդյունքում, ՔՀԿ-ների կողմից ներկայացված բազմաթիվ առաջարկություններ արտացոլված են փոփոխությունների վերանայված նախագծում, որտեղ առաջարկվում են աշխատանքային պայմանների կարելու կարգավորումներ, աշխատողներին կամայական կրճատումներից պաշտպանության երաշխիքներ, բացառապէս կենսաթոշակային տարիքի լրանալու պատճառով աշխատանքային պայմանագրի դադարեցման հնարավորության վերացում եւ այլն:
13. Այնուամենայնիվ, ներպետական օրենսդրության մեջ շարունակում են մի շարք խնդիրներ մնալ: Օրինակ՝ կոլեկտիվ աշխատանքային հարաբերությունների վերաբերյալ կարգավորումները բավականին խնդրահարույց եւ գերկանոնակարգված է: Կոլեկտիվ բանակցությունների դաշտը պետք է ազատականացվի, որպեսզի կողմերը փոխշահավետ պայմաններով բանակցությունների միջոցով կարգավորեն մի շարք հարցեր:
14. ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր ոք ունի այլոց հետ ազատորեն միավորվելու, ներառյալ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով արհեստակցական միություններ ստեղծելու եւ դրանց անդամագրվելու իրավունք: Մա աշխատողների եւ գործատուների՝ աշխատանքային իրավունքների եւ շահերի պաշտպանության

¹² ԻՊԱՍ, Աշխատանքային գործերով դատական պրակտիկայի ուսումնասիրություն. աշխատանքային իրավունքի խնդիրներ, 2022, <https://prwb.am/2022/07/12/zekuyc%e2%80%a4ashxatankhayin-gortcerov-datakan-praktikayi-usumnasiruthyun%e2%80%a4-ashxatankhayin-iravunkhi-xndirner/>; գեկույցի ամփոփագիրը հասանելի է այս հղումով. <https://prwb.am/en/2022/07/12/zekuyc%e2%80%a4ashxatankhayin-gortcerov-datakan-praktikayi-usumnasiruthyun%e2%80%a4-ashxatankhayin-iravunkhi-xndirner/>

¹³ ԻՊԱՍ, Աշխատանքային գործերով դատական պրակտիկայի ուսումնասիրություն. աշխատանքային իրավունքի խնդիրներ, 2022, <https://prwb.am/2022/07/12/zekuyc%e2%80%a4ashxatankhayin-gortcerov-datakan-praktikayi-usumnasiruthyun%e2%80%a4-ashxatankhayin-iravunkhi-xndirner/>; էջեր 275-276.

¹⁴ Նույն տեղում., էջեր 266-275

համար միավորումներ ստեղծելու (ներառյալ արհմիությունների եւ գործատուների միությունների ստեղծման կամ միավորվելու իրավունքը) հետ միասին աշխատանքային օրենսդրության հիմնասյունն է: Այս սկզբունքը հստակ ամրագրված է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-րդ մասում:

15. Այնուամենայնիվ, ՀՀ օրենսդրությունը միավորումների ազատության որոշ սահմանափակումներ է նախատեսում («Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենք): Այս սահմանափակումները մտահոգություն են առաջացնում պետության կողմից ստանձնված միջազգային պարտավորությունների առումով: Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու ուղղությամբ՝ այն նպատակով, որ դատախազության աշխատակիցները, դատավորները (այդ թվում՝ Սահմանադրական դատարանի), ոստիկանության եւ անվտանգության ծառայություններում աշխատող քաղաքացիական անձինք, ինքնազբաղված անձինք եւ ոչ ֆորմալ տնտեսությունների աշխատողները կարողանան հիմնել կազմակերպություններ եւ անդամակցել դրանց՝ իրենց շահերն առաջ մղելու և պաշտպանելու համար:
16. Միեւնույն ժամանակ, արհմիություններն աշխատողների իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմներ չեն դիտվում: Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան աշխատողների անունից սոցիալական գործընկերության համաձայնագրերին մասնակցության մենաշնորհ ունի: Կոնֆեդերացիայի անդամ չհանդիսացող նորաստեղծ արհմիությունները չեն կարող մասնակցել այդ ձեւաչափին: Ավանդական արհմիությունները գործում են ոչ թափանցիկ եւ իրենց ընտրատարածքներին հաշվետու չեն:
17. Աշխատանքային օրենսգիրքը չի նախատեսում անուղղակի խտրականության սահմանում եւ ապացուցման բեռի բաշխում հոգուտ հայցվորի՝ աշխատանքային վեճերում խտրականության բոլոր դեպքերում:
18. Իրավական համակարգը չի ապահովում, որ աշխատողներն արդար եւ բարենպաստ աշխատանքային պայմաններ ունենան՝ այն չափով, որքանով պահանջվում է այս իրավունքի արդյունավետ պաշտպանության համար: Մասնավորապես, մշտապես կան մտահոգություններ, որ աշխատանքի վերցնելու, աշխատավարձի կառուցվածքի, արձակուրդի, Աշխատանքային օրենսգրքով սահմանված երաշխիքների, կարգապահական միջոցների կիրարկման եւ աշխատանքային հարաբերությունների դադարեցման վերաբերյալ որոշումներ կայացնելիս գործատուներն աշխատողների սեռն են հաշվի առնում:¹⁵ Աշխատանքային հարաբերություններում խտրականության հիմքերը հաստատելու եւ խտրականության գոհերի համար արդյունավետ փոխհատուցման մեխանիզմներ չկան: Օրինակ՝ ԻՊԱՍ-ի մշտադիտարկումը ցույց է տալիս, որ եթե կին աշխատակիցը հեռացվի հղիության մասին տեղեկացնելուց հետո, դատարանը չի քննի խտրականության հայցը, այլ կկենտրոնանա ընթացակարգային ասպեկտների վրա, աշխատանքից հեռացնելը համարելով ապօրինի՝ առանց ճանաչելու խտրականությունը:
19. Բացի այդ, Հայաստանի Հանրապետությունում չկան օրենսդրական մեխանիզմներ, որոնք զբաղվածության հետ կապված խտրականության դեպքերում ապացույցի բեռը հետեւողականորեն կտեղափոխեն հոգուտ հայցվորի:
20. Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (214-րդ հոդված) պահանջում է աշխատանքից հեռացման հրամանների փաստացի եւ իրավական հիմնավորում: Սակայն Աշխատանքային

¹⁵ <https://hcav.am/labor-rights-statement-05-07-2021/>

օրենսգիրքը դրա համար հստակ պահանջներ չի նախատեսում: Արդյունքում, գործատուները տեղյակ չլինելով ընթացակարգային պահանջներին, միայն Աշխատանքային օրենսգրքով են առաջնորդվում: Նման դեպքում դատարանը պարտավոր է անվավեր ճանաչել աշխատանքից հեռացման հրամանը քաղաքացիական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածի պահանջները չկատարելու հիմքով: Այս խնդրի լուծման համար անհրաժեշտ է նման պահանջը ներառել աշխատանքային օրենսդրության մեջ:

Առաջարկություններ

- Վերանայել Աշխատանքային օրենսգիրքը եւ համապատասխանեցնել աշխատանքային իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորություններին.
- Վերանայել արհմիությունների մասին օրենսդրությունը, որը կօգնի աշխատողների «արհմիութենականացման» բարենպաստ միջավայր ստեղծել, մեծացնել նրանց հաշվետվականությունը անդամների նկատմամբ եւ հնարավորություն կրնձեռի մասնակցել սոցիալական գործընկերության համաձայնագրին՝ անկախ Կոնֆեդերացիային նրանց անդամակցությունից.
- Բարձրացնել հանրության լայն շրջանակների իրազեկվածության մակարդակը Տեսչության գործունեության, բողոքի ներկայացման ուղիների կամ աշխատանքային իրավունքների մասին խորհրդատվություն ստանալու մասին.
- Շարունակել Տեսչության մանդատը կարգավորող օրենսդրության եւ խախտումների հայտնաբերման մեթոդների հստակեցման աշխատանքները.
- Ներդաշնակեցնել Աշխատանքային եւ Քաղաքացիական դատավարության օրենսդրությունները՝ աշխատանքից ազատման հրամանների հիմքերի համատեքստում.
- Նախատեսել աշխատանքային վեճերի քննության արագացված/առանձին ընթացակարգ վարչական դատարանում.
- Ապահովել միասնական մոտեցում աշխատանքային վեճերի վերաբերյալ հայցերի համար պետական տուրքի գանձմանը.
- Հաշվի առնելով մարդու հիմնարար իրավունքների խախտման եւ արդյունավետ դատական պաշտպանության սահմանների վերաբերյալ միջազգային կարգավորումները՝ անհրաժեշտ է Աշխատանքի օրենսգրքում խտրականության արգելքի հիմնարար իրավունքի խախտման դեպքում ոչ նյութական վնասի փոխհատուցում ստանալու հնարավորություն սահմանել: